



ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2018



**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2017Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

1. ՆԱԽԱԲԱՆ	3
2. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑ	19
3. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ 24	
4. ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ	25
5. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ	28
6. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ	30
7. ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐ	32
7.1. ՎՐԱՍՏԱՆ	32
7.2. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	33
7.3. ԹՈՒՐԹԻԱ	34
8. ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐ	35
9. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ	37
10. ԱՍԻԱ-ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱՃԱՇՐՋԱՆ	38
11. ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ	40
12. ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ	43
15. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	43
15.1. ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	43
15.2. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ	44
15.3. ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	45
15.4. ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	45
15.5. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	47
15.6. ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	48
15.7. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ	49
15.8. ՀՅՈՒՄԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	50
15.9. ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱ	51
16. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	51

16.1. Երկկողմ տնտեսական ոլորտ	51
16.2. Համագործակցություն բազմակողմ տնտեսական ձևաչափում	52
16.3. ՍԵՎՃՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	53
17. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ	54
18. ԳԼՈՒԲԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՏԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ	56
19. ԽԱՂԱՂԱՊԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	56
20. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	57
21. ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ	58
22. ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	59
23. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ	59
24. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	60
25. ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ	60
26. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ	61

1. ՆԱԽԱԲԱՆ

2017թ. ընթացքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը ՀՀ Նախագահի ուղղագծած արտաքին քաղաքականության ուղենիշերի և նրա կողմից տրված հանձնարարականների ու ՀՀ կառավարության ծրագրի հիման վրա շարունակել է աշխատանքները, որոնք ուղղված էին Հանրապետության արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, երկրի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների և երաշխիքների ապահովմանը, բարեկամ և գործընկեր պետությունների հետ փոխշահավետ համագործակցության զարգացմանը, միջազգային կազմակերպություններում և ինտեգրացիոն գործընթացներում ներգրավվածության խորացմանը: Ակտիվ քայլեր են ձեռնարկվել միջազգային հարթակներում Հայաստանի հեղինակության և դիրքերի ամրապնդման, միջազգային և տարածաշրջանային տնտեսական ու ֆինանսական կառույցների հետ ակտիվ համագործակցության զարգացման ուղղությամբ: ԱԳՆ գործունեության կարևոր մաս է հանդիսացել արտերկրում ՀՀ և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությունը, հայկական մշակութային ժառանգության պահպանումը:

2017թ. արտաքին քաղաքականության ոլորտին վերաբերող հանձնարարականները, ծրագրերը և օրակարգային հարցերը մանրամասն քննարկվել են մարտի 2-ին արտաքին գործերի նախարարությունում մեկնարկած Հայաստանի ԱԳՆ ղեկավար կազմի, արտերկրում Հայաստանի դեսպանների, միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցիչների, գլխավոր հյուպատոսների հերթական խորհրդակցության ժամանակ, որը ծրագրային ելույթով բացեց Հայաստանի Նախագահ Սերժ Սարգսյանը:

Հայաստանը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների՝ Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ֆրանսիական Հանրապետության հետ շարունակել է **Ղարաբաղյան հիմնախնդրի** խաղաղ կարգավորման գործընթացն առաջ մղելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծմանը, Վիեննայի, Սանկտ Պետերբուրգի, Ժնևի գազաթափողովներին ձեռք բերված պայմանավորվածությունների կյանքի կոչմանն ուղղված ջանքերը:

Հայաստանի սկզբունքային դիրքորոշումը ԼՂ հակամարտության կարգավորման հարցում վերահաստատվել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի կողմից սեպտեմբերի 19-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանին ունեցած ելույթում:

Արտգործնախարարը ղարաբաղյան հիմնախնդրի հանգուցալուծման գործընթացի մանրամասները և դրա վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումը ներկայացրել է ղեկտեմբերին Վիեննայում տեղի ունեցած ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդում իր ծավալուն ելույթում: ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ինը կետերով ներկայացրել է Ադրբեջանի ապակառուցողական կեցվածքը, ինչի պատճառով, մինչ օրս հնարավոր չի եղել առաջընթաց արձանագրել ԼՂ բանակցային գործընթացում:

2017թ. հոկտեմբերի 16-ին ժնևում տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների գագաթաժողովը: Այդ գագաթաժողովին կայացած բանակցությունների արդյունքներով վերջին գրեթե 4 տարվա մեջ առաջին անգամ ընդունվել է Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների համատեղ հայտարարություն:

Տարվա ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների միջև կայացել է հինգ հանդիպում:

Բաքուն շարունակել է նախկինում ձեռք բերված պարտավորություններից հետ կանգնելու իր քաղաքականությունը՝ խաթարելով բանակցային գործընթացը: Հայաստանը բազմիցս շեշտել է, որ եթե Ադրբեջանը հետևի համանախագահների՝ հրադադարը խստորեն հարգելու կոչերին, կատարի նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները, վերահաստատի իր հանձնառությունը համանախագահների կողմից առաջարկված հիմնախնդրի կարգավորման սկզբունքներին և կառուցողաբար ներգրավվի բանակցային գործընթացում, ապա դա ճանապարհ կհարթի խաղաղության գործընթացն առաջ մղելու համար համապատասխան պայմանների ստեղծման համար:

2017թ. ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափով ընդունվել է 14 հայտարարություն: Մասնավորապես, ղեկտեմբերին Վիեննայում ԵԱՀԿ նախարարների խորհրդի շրջանակներում Մինսկի խմբի համանախագահ պետությունների պատվիրակությունների ղեկավարները հանդես են եկել տարեկան ամփոփիչ հայտարարությամբ, որում լիակատար աջակցություն են հայտնել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ հիմնված միջազգային իրավունքի երեք հիմնարար սկզբունքների՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության և ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի վրա: Շեշտել են, որ Վիեննայի ու Սանկտ Պետերբուրգի գագաթաժողովներին ձեռք բերված համաձայնությունները պետք է իրականացվեն: Կոչ են արել ընդլայնել ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակի մոնիտորինգային կարողությունները և այլն: Սրանք այն դրույթներն են,

որոնց բազմիցս իր աջակցությունն է հայտնել Հայաստանը, ի տարբերություն՝ Ադրբեջանի:

Մայիսի 18-ին եռանախագահները հասցեական հայտարարություն են ընդունել, որտեղ մատնացույց են արել, որ հենց Ադրբեջանն է խախտել զինադադարը՝ առաջինն է հրետանիով կրակ բացել:

Տարվա ընթացքում համանախագահներին երևանում երեք անգամ ընդունել է Հանրապետության Նախագահը, կայացել են հանդիպումներ ԱԳ նախարարի հետ: Էդվարդ Նալբանդյանը Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպել է նաև Մյունխենում, Նյու Յորքում, Ժնևում, Մոսկվայում և Վիեննայում: Տարածաշրջանային իրենց այցելությունների շրջանակում եռանախագահներն այցելել են Ստեփանակերտ և հանդիպումներ ունեցել Արցախի ղեկավարության հետ:

Մինսկի խմբի համանախագահ երկրների գործունեությանը և հիմնահարցի կարգավորման երեք սկզբունքներին սատարող հայտարարություն է ընդունվել նոյեմբերի 30-ին Մինսկում կայացած ՀԱՊԿ ՀԱԽ նստաշրջանին:

Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի մեջ ամրագրվել է Մինսկի խմբի համանախագահներին և որպես հիմնախնդրի կարգավորման հիմք նրանց կողմից առաջարկված միջազգային իրավունքի երեք սկզբունքներին աջակցության մասին դրույթը:

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման երեք սկզբունքները տեղ են գտել նաև Եվրոպական խորհրդարանի կողմից ընդունված երկու բանաձևերում և վերահաստատվել են դեկտեմբերին ՀՀ-ԵՄ խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի կողմից ընդունած եզրափակիչ հայտարարության և առաջարկությունների մեջ:

Չնայած Ադրբեջանի իշխանությունների կողմից Արցախի տեղեկատվական շրջափակմանն ուղղված տարաբնույթ ջանքերին, Արցախ այցելող արտերկրի օրենսդիր մարմինների ներկայացուցիչների, հասարակական-քաղաքական գործիչների, լրագրողների, բլոգերների և զբոսաշրջիկների թիվն ավելացել է:

2017թ. հայկական դիվանագիտության առաջնահերթությունների թվում շարունակել է մնալ **Հայոց ցեղասպանության** միջազգային ճանաչումը և դատապարտումը, ինչպես նաև Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը նոր ցեղասպանությունների,

մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային հանրության ջանքերում:

Ապրիլի 25-ին Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատն ընդունել է Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև:

2017թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչած ԱՄՆ նահանգների թիվը հասել է 48-ի. նրանց են միացել Վայոմինգը, Թեխասը, Այովան, Ինդիանան: Հայոց ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել են նաև բազմաթիվ երկրների տեղական ինքնակառավարման մարմիններ:

Տարին նշանավորվել է մի շարք երկրների հետ Հայաստանի Հանրապետության **դիվանագիտական հարաբերությունների հաստատման** և միջազգային տարբեր կառույցներին **Հայաստանի անդամակցության 25-ամյա հոբելյաններով**: Քառորդդարյա այս նշանակետը լավ հնարավորություն էր՝ ամփոփելու անցած ճանապարհն ու նախանշելու հետագա համագործակցության ուղիները: Այս առիթով իրականացվել է պետությունների առաջնորդների, կառավարությունների ղեկավարների, ԱԳ նախարարների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների գլխավոր քարտուղարների հետ ուղերձների փոխանակում, բազմաթիվ երկրներում կազմակերպվել են 25-ամյա հոբելյանին նվիրված հատուկ միջոցառումներ:

Ռուսաստանի Դաշնության հետ շարունակվել են համատեղ ջանքերը՝ ուղղված բոլոր ուղղություններով հայ-ռուսական դաշնակցային, ռազմավարական հարաբերությունների հետագա ամրապնդմանը:

Երկկողմ և բազմակողմ ձևաչափերով ՀՀ և ՌԴ նախագահների միջև կայացել են շուրջ մեկ տասնյակ պաշտոնական և աշխատանքային հանդիպումներ: Ակտիվ են եղել երկու երկրների օրենսդիր և գործադիր մարմինների ղեկավարների միջև շփումները: Տասնյակ հանդիպումներ են կայացել ՀՀ և ՌԴ արտգործնախարարների միջև, ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ բազմակողմ հարթակներում:

Ամրապնդվել է պաշտպանական, ռազմատեխնիկական, տնտեսական, միջտարածաշրջանային, մշակութային, գիտակրթական, հումանիտար և այլ ոլորտներում հայ-ռուսական սերտ համագործակցությունը:

Տարվա ընթացքում ստորագրվել են շուրջ երկու տասնյակ միջկառավարական և միջգերատեսչական իրավական փաստաթղթեր:

Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում իր կարևոր տեղն է զբաղեցրել **հայ-ամերիկյան** բարեկամական գործընկերության զարգացումը, շարունակվել է երկկողմ քաղաքական երկխոսությունը: Մարտի 3-ին կայացել է ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հեռախոսազրույցը ԱՄՆ պետքարտուղար Ռեքս Թիլերսոնի հետ:

Սեպտեմբերին Հայաստան են այցելել ԱՄՆ Կոնգրեսի, իսկ հոկտեմբերին՝ ԱՄՆ Կալիֆորնիայի Սենատի և Ասամբլեայի պատվիրակությունները:

Ճարունակվել են քայլերը երկկողմ առևտրատնտեսական համագործակցության ընդլայնման ուղղությամբ:

Հայաստանի արտաքին հարաբերությունների հիմնական ուղղություններից է շարունակել մնալ **Եվրոպական միության** հետ փոխգործակցության ընդլայնումը:

Նոյեմբերի 24-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը Բրյուսելում մասնակցել է Արևելյան գործընկերության 5-րդ գագաթաժողովին, որի ավարտին Սերժ Սարգսյանի և Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի ներկայությամբ ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը և Եվրամիության արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոզերինին ստորագրել են ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, ինչը դարձավ գագաթաժողովի հիմնական ձեռքբերումներից մեկը: Այս համընդգրկուն համաձայնագիրը նոր էջ է բացել Հայաստան-Եվրոպական միություն հարաբերություններում:

2017թ. ձեռքբերումներից էր նաև ՀՀ-ԵՄ Ընդհանուր ավիացիոն գոտու համաձայնագրի նախաստորագրումը, «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի «Մշակույթ» ենթածրագրին միանալու բանակցությունների եզրափակումը, ինչպես նաև Տրանսեվրոպական տրանսպորտային ցանցի (TEN-T) դեպի Հայաստանի Հանրապետություն ընդլայնման բարձր մակարդի փոխըմբռնման արձանագրության ստորագրումը:

Ապրիլին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Բիշքեկում կայացած **Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ)** անդամ-պետությունների ղեկավարների հանդիպմանը, որին միաձայն որոշում է կայացվել մայիսից ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում նշանակել ՀՀ ներկայացուցիչ Յուրի Խաչատուրովին:

2017 թվականին Հայաստանը շարունակել է իր ակտիվ ներգրավվածությունը **Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ)** գործունեությանը:

Յուրաքանչյուրին երևանում կայացել են ԵԱՏՄ անդամ-պետությունների կառավարությունների ղեկավարների նիստը և Եվրասիական գործընկերության երկրորդ միջազգային համաժողովը:

Հայաստանը շարունակել է ակտիվ ներգրավվածությունը **Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ)** և գործընկեր կառույցների աշխատանքներին:

Մարտի 7-ին Փարիզում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը այցելել է ՖՄԿ կենտրոնակայան, հանդիպում ունեցել գլխավոր քարտուղար Միկայել Ժանի հետ:

Մեկնարկել են 2018թ. երևանում կայանալիք ՖՄԿ 17-րդ գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքները: Նոյեմբերին Փարիզում կայացած ՖՄԿ նախարարների 34-րդ համաժողովին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ստանձնել է ՖՄԿ նախարարների համաժողովի նախագահությունը: Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը ելույթ է ունեցել նախարարական համաժողովին, որը միաձայն հավանության է արժանացրել ՖՄԿ երևանյան գագաթաժողովի անցկացման օրերի, խորհրդանշանի և «Ապրել միասին» կարգախոսի վերաբերյալ հայկական կողմի առաջարկներին:

2017թ. գարնանը Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի կապակցությամբ կազմակերպվել է շուրջ 600 միջոցառում:

Գործնական քայլեր են իրականացվել **հարևան երկրների** հետ հարաբերությունների առավել զարգացման ուղղությամբ:

Հայաստանը շարունակել է **Վրաստանի** հետ առկա համագործակցությունն առավել խորացնելու քաղաքականությունը:

Կայացել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի, ԱԺ նախագահ Արա Բաբլոյանի, Վարչապետ Կարեն Կարապետյանի պաշտոնական այցերը Վրաստան, ինչպես նաև Վրաստանի փոխվարչապետ, արտգործնախարար Միխեիլ Ջանելիձեի պաշտոնական և աշխատանքային այցերը Հայաստան: Երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները մի շարք հանդիպումներ են ունեցել բազմակողմ համաժողովների շրջանակներում:

Պարբերական բնույթ են կրել երկու երկրների տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակով փոխայցելությունները:

Ճարուևակել է ընդլայնվել **հայ-իրանական** փոխգործակցությունը: Օգոստոսին կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի աշխատանքային այցը Թեհրան: Իրան է այցելել ՀՀ Վարչապետը: Հայաստանի և Իրանի արտգործնախարարները մի շարք հանդիպումներ են ունեցել միջազգային հարթակներում: Երևան է այցելել Իրանի արտգործնախարարը:

Չարգացել է համագործակցությունը առևտրատնտեսական, էներգետիկայի, տրանսպորտի, գյուղատնտեսության, գիտակրթական, մշակութային և այլ ոլորտներում:

Անդրադառնալով հայ-թուրքական հարաբերությունների բացակայությանը՝ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանում իր ելույթում ընդգծել է, որ Թուրքիայի կողմից 2009թ. արձանագրությունների վավերացման ուղղությամբ դրական տեղաշարժի բացակայության պարագայում Հայաստանը Ցյուրիխյան արձանագրությունները հայտարարելու է առ ոչինչ և 2018թ. գարուն է մտնելու առանց այդ արձանագրությունների:

Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) շրջանակներում Հայաստանն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել կառույցում ծավալվող գործընթացներին: Ուշադրություն է հատկացվել ԱՊՀ մասնակից պետությունների հետ ավանդական կապերի խորացմանը:

ՀՀ նախագահն այցելել է Ղազախստան՝ «Աստանա Էքսպո - 2017» միջազգային ցուցահանդեսի և Թուրքմենստան՝ Ասիական 5-րդ խաղերի բացման պաշտոնական արարողություններին մասնակցելու նպատակով:

Հունիսին **Տաշկետանի** նախագահ Էմոմալի Ռահմոնի Հայաստան պաշտոնական այցի ժամանակ ընդունվել է ՀՀ և ՏՀ Նախագահների համատեղ հայտարարություն և ստորագրվել երկկողմ 9 համաձայնագիր:

Օգոստոսին Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուլհամեդովի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցի արդյունքներով ընդունվել է նախագահների համատեղ հայտարարություն, ստորագրվել է միջպետական և միջգերատեսչական բնույթի 9 համաձայնագիր:

Նոյեմբերին կայացել է Մոլդովայի նախագահ Իգոր Դոդոնի պաշտոնական այցը Հայաստան:

Քայլեր են ձեռնարկվել **Եվրոպական երկրների** հետ համագործակցային կապերը սերտացնելու ուղղությամբ: Կայացել են բարձրաստիճան մի շարք հանդիպումներ եվրոպացի բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այց է կատարել Ֆրանսիայի Հանրապետություն, աշխատանքային այց` Բելգիայի Թագավորություն: ՄԱԿ ԳԱ 72-րդ նստաշրջանի շրջանակներում Նախագահը հանդիպում է ունեցել Լեհաստանի նախագահ Անժեյ Դուդայի հետ:

ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական և աշխատանքային այցեր է կատարել Ֆրանսիա, Ավստրիա, Գերմանիա, Իսպանիա, Իտալիա, Լեհաստան, Վատիկան, Սերբիա, Էստոնիա, Բելգիա, Հունաստան:

Միջազգային համաժողովների շրջանակներում կայացել են ՀՀ ԱԳ նախարարի հանդիպումներն Ավստրիայի, Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Լյուքսեմբուրգի, Բուլղարիայի, Իռլանդիայի, Մալթայի, Իսպանիայի, Միացյալ Թագավորության ու Կոսովոյի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների հետ:

Հայաստան են այցելել Նիդերլանդների և Չեխիայի Սենատի նախագահները, Էստոնիայի, Լեհաստանի, Հունաստանի, Բոսնիա և Հերցեգովինայի ԱԳ նախարարները, Միացյալ Թագավորության Եվրոպայի և Ամերիկայի հարցերով պետնախարարը, Ֆինլանդիայի ԱԳ պետքարտուղարը: Հայաստանի ԱԺ նախագահը պաշտոնական այց է իրականացրել Լեհաստան:

Կայացել են հայ-իտալական, հայ-լիտվական և հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովների նիստերը:

2017թ. Հայաստանը հետևողական քայլեր է ձեռնարկել **ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի պետությունների** հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Տարին նշանավորվել է **Զինաստանի** հետ քաղաքական, տնտեսական, մշակութային, անվտանգության և ահաբեկչության դեմ պայքարի և այլ ոլորտներում միջգերատեսչական փոխայցելությունների ակտիվությամբ:

Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի հրավերով նոյեմբերի 2-4-ը Նախագահ Սերժ Սարգսյանը աշխատանքային այց է կատարել Նյու Դելի: Հնդկաստանի փոխնախագահը պաշտոնական այց է կատարել Հայաստան: ՀՀ Ազգային ժողովի նախագահն այցելել է Ճապոնիա և Կորեա:

Մերձավոր Արևելքի ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքները, նրանց ինքնության պաշտպանությանը վերաբերող հարցերը մշտապես գտնվել են Հայաստանի ուշադրության կենտրոնում:

2017թ. կայացել է ՀՀ Նախագահի պաշտոնական այցը **Կատար** և աշխատանքային այցը **ԱՄԷ**՝ մասնակցելու Աբու Դաբիում անցկացվող «Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ» ներդրումային համաժողովին: Կատար է այցելել արտգործնախարարը:

Սեպտեմբերի 29-30-ին Երևանում կայացավ հայ-**եգիպտական** միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստը, որի շրջանակներում ստորագրվել է յոթ փաստաթուղթ:

Քայլեր են ձեռնարկվել **Իսրայելի** հետ երկկողմ հարաբերությունների խորացման ուղղությամբ, որոնք նշանավորվել են բարձր մակարդակի փոխայցելություններով:

Մարտին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը այցելել է Երուսաղեմ՝ մասնակցելու Սուրբ Հարության տաճարում Հիսուս Քրիստոսի Սուրբ Գերեզմանի վերանորոգմանը նվիրված հանդիսավոր արարողությանը: Իսրայելի վարչապետ և ԱԳ նախարար Բենյամին Նեթանյահուի հրավերով նոյեմբերին տեղի է ունեցել ԱԳ նախարարի պաշտոնական այցը Իսրայել:

Հուլիսին Իսրայելի Պետության տարածքային համագործակցության նախարար Ցախի Հանեգբիի Հայաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում ստորագրվել է երեք փաստաթուղթ:

Առանցքային տեղ էին զբաղեցնում սիրիահայության անվտանգության, Սիրիայում հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման, սիրիահայությանը օժանդակության ցուցաբերման հարցերը: Հայաստանը շարունակել է Սիրիային մարդասիրական օգնության տրամադրումը: ՀՀ Նախագահի հանձնարարությամբ շուրջ 80 տոննա մարդասիրական օգնություն է առաքվել Սիրիա:

Տեղի են ունեցել Հայաստանի և Իրաքի միջև տարբեր մակարդակների մի շարք փոխայցելություններ, արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների հանդիպումներ միջազգային կառույցների շրջանակներում, ընդլայնվել են միջկառավարական և միջխորհրդարանական կապերը: Սեպտեմբերի 25-26-ին Երևանում կայացավ հայ-իրաքյան միջկառավարական հանձնաժողովի 4-րդ նիստը:

Հայաստանը քայլեր է ձեռնարկել **ամերիկյան աշխարհամասի պետությունների** հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Փետրվարին Հայաստան և Արցախ է այցելել **Բոլիվիայի** խորհրդարանական պատվիրակությունը:

Յուլի ամսին Հայաստան և Արցախ են այցելել **Մեքսիկայի** Պատգամավորների պալատի Մեքսիկա-Հայաստան բարեկամության խմբի պատվիրակության անդամները:

Նոյեմբերին պաշտոնական այցով Հայաստան ժամանած **Բրազիլիայի** ԱԳ Նախարարի այցի շրջանակներում ստորագրվել է «ՀՀ և ԲՂՀ կառավարությունների միջև առևտրային և ներդրումային համագործակցության մասին» փաստաթուղթ:

Հայաստանը շարունակել է խորացնել իր ներգրավվածությունը **Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ)** կառույցներում:

Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցել և ծրագրային ելույթով հանդես է եկել ՀՀ Նախագահը, ով հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի հետ:

Մարտի 16-ին ԱԳ Նախարար Էդվարդ Նալբանդյանի և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի մասնակցությամբ Նյու Յորքում տեղի է ունեցել ՄԱԿ-ին Հայաստանի անդամակցության 25-ամյակի նվիրված հանդիսավոր միջոցառում: Մարտի 17-ին կայացել է Էդվարդ Նալբանդյանի և Անտոնիո Գուտերեշի հանդիպումը: Սեպտեմբերին Հայաստանի պատվիրակության կազմում Նյու Յորք մեկնած ԱԳ Նախարար Նալբանդյանն ունեցել է 23 երկկողմ հանդիպում:

Ակտիվ աշխատանքներ են իրականացվել **ՅՈՒՆԵՍԿՕ**-ի շրջանակներում: Նոյեմբերին Հայաստանն ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային արժեքների՝ ծագման երկիր վերադարձը կամ ապօրինի յուրացման պարագայում դրանց ռեստիտուցիան խրախուսելու հարցերով միջկառավարական կոմիտեի անդամ 2017-2021թթ. ժամանակահատվածի համար և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Չինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի անդամ 2017-2021թթ. ժամանակահատվածի համար:

Կոմիտասի և Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյաններն ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների հոբելյանների 2018-2019թթ. օրացույցում, իսկ «Քոչարի, ավանդական խմբապար»

հայտն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

Մեծ ուշադրություն է հատկացվել Հայաստանի ակտիվ ներգրավվածությանը **Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունում (ԵԱՀԿ)**՝ կառույցի գործունեության բոլոր երեք հարթություններով:

Կայացել են ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումները ԵԱՀԿ գործող նախագահ Սեբաստիան Կուրցի, ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Չանիերի և Նրան փոխարինած Թոմաս Գրեմինգերի, ԵԱՀԿ գործող նախագահի՝ Հարավային Կովկասի հարցերով հատուկ ներկայացուցիչ, դեսպան Գյունտեր Բելխլերի հետ:

Նոյեմբերի 22-ին երևանում տեղի է ունեցել «Քրիստոնյաների և կրոնական այլ խմբերի անդամների հանդեպ ատելության շարժառիթով հանցագործությունների կանխարգելումը և դրանց հակազդումը. հեռանկարներ ԵԱՀԿ-ից և անդին» խորագրով համաժողովը, որը կազմակերպվել էր ԵԱՀԿ ավստրիական նախագահության և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից, Հայաստանի արտգործնախարարության աջակցությամբ:

Լիակատար մեկուսացման մեջ հայտնված Ադրբեջանի՝ ԵԱՀԿ մասնակից բոլոր երկրներին դեմ գնալու հետևանքով կոնսենսուս չձևավորվեց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի մանդատի երկարաձգման մասին որոշման շուրջ, որի պատճառով օգոստոսի 31-ին գրասենյակը դադարեցրեց իր գործունեությունը: ԵԱՀԿ քարտուղարության և մի շարք մասնակից երկրների հետ մեկնարկել են քննարկումները Հայաստանում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման շարունակման վերաբերյալ:

Հայաստանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել **Եվրոպայի խորհրդի (ԵԽ)** կանոնադրական և մասնագիտացած մարմինների աշխատանքներին: Տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարարի և ԵԽ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների փոխադարձ այցելություններ:

Շարունակվել է Հայաստանի և **Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ)** միջև փոխգործակցությունը Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) շրջանակներում: Ապրիլին Հյուսիսատլանտյան խորհրդի և Հայաստանի կողմից հաստատվել է Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ 2017-2019թթ. փաստաթուղթը:

Փետրվարին ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում տեղի է ունեցել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յենս Ստոլտենբերգի հետ:

Արտաքին գործերի նախարարությունը համակարգել է 2017թ. ապրիլի 2-ին ՀՀ խորհրդարանական ընտրությունները դիտարկելու նպատակով Հայաստան ժամանած միջազգային դիտորդական առաքելությունների ընդունման և նրանց գործունեության պայմանների ապահովման ուղղությամբ աշխատանքները: Ընտրությունները դիտարկելու համար Հայաստան էին ժամանել շուրջ 650 միջազգային դիտորդ:

ՀՀ արտգործնախարարության գործունեության կարևորագույն ուղղություններից է եղել Հայաստանի **արտաքին տնտեսական հարաբերությունների** զարգացումը:

Իրականացվել են անհրաժեշտ աշխատանքներ՝ ՀՀ Կառավարության համապատասխան որոշումներից բխող գործողությունների պլանավորման և իրականացման գործընթացը կազմակերպելու նպատակով:

ՀՀ և ՉԺՀ, ՌԴ, ԱՄՆ, ԱՄԷ, Հնդկաստանի, Չեխիայի, Իտալիայի միջև առևտրատնտեսական հարաբերությունների արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ Նախագահի նստավայրում կայացել են խորհրդակցություններ ՀՀ դեսպանների ներկայությամբ:

Հայաստանն անդամակցել է Ազատ տնտեսական գոտիների համաշխարհային կազմակերպությանը:

Հայաստան են այցելել **Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի** նախագահը, ինչպես նաև **Եվրոպական ներդրումային բանկի** փոխնախագահը: Ծարունակվել են աշխատանքները «ՏՐԱՍԵԿԱ» ծրագրի շրջանակներում:

Դեկտեմբերին Հայաստանի արտգործնախարարը ստանձնել է **ՍՃՏՀԿ Նախագահությունը**:

Մայիսի 16-ին «**Եվրասիական ֆոնդային բորսաների ֆեդերացիայի**» Թեհրանում կայացած գլխավոր ասամբլեայի նիստին որոշում է կայացվել ֆեդերացիայի գլխամասային գրասենյակը Հայաստան տեղափոխելու մասին:

Արտաքին գործերի նախարարությունը ներգրավված է եղել նաև Հայաստանի՝ «**Արդյունաբերող ճյուղերի թափանցիկության միջազգային նախաձեռնությանը**» (**ԱՃԹՆ**) անդամակցելու նպատակով իրականացվող աշխատանքներին:

Տեղի է ունեցել միջկառավարական հանձնաժողովի վեց նիստ, չորս գործարար համաժողով, ստորագրվել են տասնյակ փաստաթղթեր:

Հայաստանը շարունակել է **մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի** ոլորտում սերտ համագործակցությունը միջազգային, տարածաշրջանային և երկկողմ մակարդակներով: Հայաստանը առաջատար դիրքեր է զբաղեցրել մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ առավել հաջող պայքար ծավալող երկրների ցանկում:

Արտաքին գործերի նախարարությունը շարունակել է համակարգել **մարդու իրավունքների ոլորտում** պետական կառավարման մարմինների գործունեության համապատասխանեցումը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին:

Արտաքին քաղաքականության օրակարգում են եղել **գլոբալ անվտանգության և ոչ կոնվենցիոնալ խնդիրները:**

Սեպտեմբերի 21-ին Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության 61-րդ նստաշրջանում Հայաստանն առաջին անգամ ընտրվել է այդ կառույցի Գործադիր խորհրդի անդամ:

Հայաստանի Հանրապետությունն իր ակտիվ, հետևողական ներգրավվածությունն է բերել **միջազգային խաղաղության և անվտանգության ուղղությամբ** իրականացվող ջանքերին: Ծարունակվել է մասնակցությունն Աֆղանստանի (Վճռական աջակցություն), Կոսովոյի (KFOR), Լիբանանի (UNIFIL) և Մալիի (MINUSMA) խաղաղապահ առաքելություններին: Ծարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների դեպարտամենտի (DPKO) հետ:

Հանրապետության նախագահի՝ ՀՀ **միասնական արտաքին քաղաքականության** վարման գործում պետական մարմինների գործունեությունը համակարգելու վերաբերյալ հրամանագրի դրույթների համաձայն՝ արտաքին գործերի նախարարությունը շարունակել է համակարգել Հայաստանի պետական կառավարման մարմինների արտաքին կապերը և նպաստել դրանց խորացմանը:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները աջակցել են **խորհրդարանական դիվանագիտության** ուղղությամբ տարվող աշխատանքներին՝ ցուցաբերելով համակողմանի օժանդակություն միջխորհրդարանական կապերի զարգացմանը, միջազգային

կազմակերպությունների խորհրդարանական ձևաչափում փոխգործակցության սերտացմանը և ակտիվացմանը:

Լրացուցիչ ջանքեր են գործադրվել մի շարք երկրների հետ **ապակենտրոնացված համագործակցության** զարգացման ուղղությամբ:

Արտաքին քաղաքական օրակարգում շարունակել է կարևոր տեղ զբաղեցնել **Ջայրենիք-Սփյուռք** կապերի ամրապնդումը և այդ ուղղությամբ ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնություններին աջակցությունը: ՀՀ ԱԳՆ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել սեպտեմբերին Երևանում կայացած Հայաստան-Սփյուռք վեցերորդ համահայկական համաժողովի նախապատրաստմանը և անցկացմանը:

Կարևոր տեղ է հատկացվել արտասահմանում **հայկական մշակույթի** ներկայացման, արտերկրում գտնվող հայկական մշակութային ժառանգության պահպանման և տարբեր պետությունների հետ մշակութային համագործակցության հաստատման և զարգացման ուղղությամբ ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ իրականացվող աշխատանքներին: Աշխարհի բազմաթիվ երկրներում կազմակերպվել են Հայաստանի մշակութային օրեր:

2017թ. դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել 7 երկրի հետ: Դեկտեմբերի դրությամբ Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ ուներ 175 պետության հետ:

Ընդլայնվել է Հայաստանի **միջազգային իրավապայմանագրային դաշտը**. Ստորագրվել է 73 միջազգային պայմանագիր, իրականացվել է 106 միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման գործընթաց: Ուժի մեջ է մտել 64 միջազգային պայմանագիր:

ԱԳՆ համակարգում շրջանառվել է 142 936 փաստաթուղթ:

Արտգործնախարարության մշտական ուշադրության կենտրոնում է եղել **արտերկրում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց** իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ճգնաժամային իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին և ազգությամբ հայերին օգնության ցուցաբերումը: ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության և հյուպատոսական հիմնարկների կողմից սպասարկվել է շուրջ 151 000 քաղաքացի:

2017թ. ՀՀ Նախագահը կատարել է 21 օտարերկրյա այց: Պաշտոնական այցով Հայաստան են այցելել 4 պետության ղեկավար: ՀՀ ԱԺ Նախագահը կատարել է 8

արտասահմանյան այց: Հայաստան է այցելել 3 պետության խորհրդարանի ղեկավար: ՀՀ վարչապետը կատարել է 8 այց արտերկիր: Հայաստան է այցելել 8 երկրի կառավարության ղեկավար: ԱԳ նախարարը կատարել է 41 օտարերկրյա այց: Հայաստան է այցելել 19 արտգործնախարար և միջազգային կազմակերպության ղեկավար: Հայաստանի արտգործնախարարը 105 հանդիպում է ունեցել տարբեր երկրների իր գործընկերների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների հետ:

Տարվա ընթացքում շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը:

Հանրապետության նախագահը, վարչապետն ու ԱԳ նախարարը մի քանի տասնյակ հարցազրույցներ են տվել միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներին, մի շարք երկրներում հանդես են եկել մամուլի ասուլիսներով և դասախոսություններով՝ ներկայացնելով տարածաշրջանային և միջազգային տարբեր գործընթացների, խնդիրների և դրանց հանգուցալուծման վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումները, ինչպես նաև երկրում իրականացվող բարեփոխումները, տնտեսական, ներդրումային և զբոսաշրջային հնարավորությունները:

Հայաստանի և Արցախի վերաբերյալ տարբեր միջազգային լրատվական կայքերում և պարբերականներում հրապարակվել են հատուկ համարներ և բազմաթիվ հոդվածներ:

2. ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑ

2017թ. Հայաստանը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ պետությունների՝ Ռուսաստանի Դաշնության, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի Հանրապետության հետ համատեղ, շարունակել է ղարաբաղյան հիմնախնդրի՝ բացառապես խաղաղ կարգավորման գործընթացն առաջ մղելու նպատակով համապատասխան պայմանների ստեղծմանն ուղղված քայլերը:

Տարվա սկզբին ադրբեջանական կողմը, խախտելով 1994-95թթ. կնքված եռակողմ անժամկետ զինադադարի համաձայնագրերը, Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծին և Հայաստանի հետ սահմանի երկայնքով նախաձեռնել է սադրանքների և դիվերսիոն

գործողությունների նոր ակիբ, ինչը հանգեցրել է կորուստների նաև քաղաքացիական բնակչության շրջանում: Կոպտորեն խախտելով միջազգային մարդասիրական իրավունքը ադրբեջանական կողմը թիրախավորել է նաև քաղաքացիական նշանակության օբյեկտներ:

Բաքուն շարունակել է իր զինված ուժերի հենակետերն ադրբեջանական բնակավայրերում ու դրանց անմիջական հարևանությամբ տեղակայելու և այդտեղից սադրանքներ նախաձեռնելու՝ խստորեն դատապարտելի իր գործելաոճը: Ադրբեջանի կողմից դարաբաղա-ադրբեջանական շփման գծում և հայ-ադրբեջանական սահմանին իրադրության սրման ուղղությամբ շարունակաբար ձեռնարկվող գործողությունները հանգեցրել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մայիսի 18-ի հասցեական հայտարարությանը, որում մատնացույց է արվել, որ հենց Ադրբեջանն է խախտել զինադադարը, առաջինն է հրետանիով կրակ բացել:

Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների միջև կայացել է հինգ հանդիպում՝ փետրվարի 16-ին Մյունխենում, ապրիլի 28-ին՝ Մոսկվայում, հուլիսի 11-ին՝ Բրյուսելում, սեպտեմբերի 23-ին՝ Նյու Յորքում, դեկտեմբերի 6-ին՝ Վիեննայում:

Նախարարների միջև հանդիպումները և համանախագահների գործուն միջնորդական ջանքերը հնարավորություն են ընձեռել 16 ամսվա ընդմիջումից հետո՝ 2017թ. հոկտեմբերի 16-ին, ժնկում անցկացնել Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպում: Մոտ չորս տարվա ընդմիջումից հետո ժնկի գագաթաժողովին առաջին անգամ Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների համատեղ հայտարարություն է ընդունվել, որում, մասնավորապես, նշվել է ձեռք բերված պայմանավորվածության մասին՝ ակտիվացնել բնակցային գործընթացը և լրացուցիչ քայլեր ձեռնարկել շփման գծում լարվածությունը թուլացնելու նպատակով, այն նույն քայլերը, որոնց մասին ասվում էր 2016թ. Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի գագաթաժողովներին արված հայտարարություններում և որոնց նկատմամբ Հայաստանը բազմիցս հայտարարել է իր աջակցությունը: Սակայն, ինչպես միշտ, Բաքուն, հավատարիմ մնալով իր կողմից որդեգրած գործելաոճին, գագաթաժողովից անմիջապես հետո վերսկսեց իր անհիմն մեղադրանքները և ռազմատենչ հռետորաբանությունը:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափով ընդունվել է 14 հայտարարություն, որից 12-ը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ դեսպանների կողմից (ՌԴ՝ Իգոր Պոպով, Ֆրանսիա՝ Ստեֆան Վիսկոնտի, ԱՄՆ՝ Ռիչարդ Յոզլանդ, ում օգոստոսին փոխարինել է Էնդրյու Շոֆերը): Հայտարարություններում հղում է կատարվել Վիեննայի և Սանկտ Պետերբուրգի գագաթաժողովներին ձեռք բերված

պայմանավորվածությունների իրականացման անհրաժեշտությանը՝ հրադադարի ռեժիմի ամրապնդման և լարվածության թուլացման նպատակով:

Սեպտեմբերի 19-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանին իր ելույթում, վերահաստատելով ՀՀ սկզբունքային դիրքորոշումը, նշել է, որ Արցախի Հանրապետությունը չի կարող ունենալ ավելի ցածր կարգավիճակ և վայելել ավելի քիչ ազատություն, քան այսօր ունի, և որ Ադրբեջանը պետք է ճանաչի և հարգի Արցախի ժողովրդի կողմից իր ապագան ազատ կամաարտահայտությամբ որոշելու իրավունքը, իսկ արցախահայության անվտանգությունը պետք է երաշխավորված լինի բոլոր հնարավոր միջազգային և ներքին մեխանիզմներով:

«Հայաստան-Սփյուռք» 6-րդ համահայկական համաժողովին ղարաբաղյան կարգավորման վերաբերյալ իր ելույթում ԱԳ նախարար Նալբանդյանը ներկայացրել է այն մոտեցումները, որոնց վրա խարսխված են Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման ուղղությամբ իրականացվող Հայաստանի աշխատանքները՝ ուղղված հիմնահարցի արդար հանգուցալուծմանն ու տարածաշրջանում տևական խաղաղության հաստատմանը:

Դեկտեմբերի 7-ին Վիեննայում ԵԱՀԿ նախարարական համաժողովին ունեցած իր ծավալուն ելույթում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ինը կետերով ներկայացրել է Ադրբեջանի ապակառուցողական կեցվածքը, ինչի պատճառով, մինչ օրս հնարավոր չի եղել առաջընթաց արձանագրել ԼՂ խաղաղ բանակցային գործընթացում: Նա նշել է, որ կարգավորման ուղղությամբ առաջընթացի բացակայությունը՝ չնայած նախագահական և նախարարական մակարդակներով բազմաթիվ հանդիպումներին, բանակցությունների բազմաթիվ փուլերին, համանախագահ երկրների անխոնջ միջնորդությանը, ԵԱՀԿ և այլ կառույցների կողմից համանախագահների ջանքերին և մոտեցումներին ցուցաբերված աներկբա աջակցությանը, պայմանավորված է բանակցային գործընթացում Ադրբեջանի ցուցաբերած անզիջողական և առավելապաշտական դիրքորոշմամբ, Բաքվի մերժմամբ՝ իրականացնելու այն, ինչի շուրջ համաձայնություն էր ձեռք բերվել Վիեննայում, Սանկտ Պետերբուրգում, Ժնևում՝ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների վերջին երեք հանդիպումներում:

Բաքուն հետ է կանգնել բազմաթիվ այլ պայմանավորվածություններից, և այդ օրինակներն իրավամբ հարցականի տակ են դնում Ադրբեջանի՝ որպես բանակցային կողմի վստահելիությունը: Հայաստանը բազմիցս շեշտել է, որ եթե Բաքուն հետևի համանախագահների՝ հրադադարը խստորեն հարգելու կոչերին, կատարի նախկինում ձեռք բերված պայմանավորվածությունները, վերահաստատի իր հանձնառությունը համանախագահների կողմից առաջարկված հիմնախնդրի կարգավորման սկզբունքներին և կառուցողաբար ներգրավվի բանակցային

գործընթացում, ապա դա ճանապարհ կհարթի խաղաղության գործընթացն առաջ մղելու համար:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն իրականացրել են երեք տարածաշրջանային այց՝ մարտի 27-ին, հունիսի 10-ին և հոկտեմբերի 6-ին, որոնց շրջանակներում երևանում համանախագահներին ընդունել է Հանրապետության Նախագահը, կայացել են հանդիպումներ նաև ԱԳ նախարարի հետ: Տարածաշրջանային իրենց այցելությունների շրջանակում եռանախագահները Ստեփանակերտում հանդիպումներ են ունեցել Արցախի ղեկավարության հետ:

ԱԳ նախարարը Մինսկի խմբի համանախագահների հետ հանդիպել է նաև փետրվարի 16-ին Մյունխենում, սեպտեմբերի 23-ին Նյու Յորքում, հոկտեմբերի 16-ին Ժնևում, նոյեմբերի 14-ին Մոսկվայում և դեկտեմբերի 6-ին Վիեննայում:

Դեկտեմբերի 7-ին Վիեննայում կայացած ԵԱՀԿ ԱԳ նախարարների 24-րդ համաժողովի շրջանակներում Մինսկի խմբի համանախագահ պետությունների պատվիրակությունների ղեկավարները՝ ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովը, ԱՄՆ պետքարտուղար Ռեքս Թիլերսոնը, ԵԱՀԿ-ում Ֆրանսիայի պատվիրակության ղեկավար Վերոնիկ Ռոժեր-Լականը, հանդես են եկել համատեղ հայտարարությամբ: Նրանք իրենց լիակատար աջակցությունն են հայտնել դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ հիմնված միջազգային իրավունքի երեք հիմնարար սկզբունքների՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության և ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի վրա:

Հայտարարությունում եռանախագահները հատուկ շեշտել են 2016թ. Վիեննայում և Սանկտ Պետերբուրգում ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման կարևորությունը: Նրանք կոչ են արել զերծ մնալ մարդասիրական ջանքերի քաղաքականացումից:

Համանախագահ երկրների պատվիրակությունների ղեկավարները, անդրադառնալով երկու երկրների նախագահների հանձնառությանը՝ շփման գծում լարվածության թուլացման համար հավելյալ միջոցներ ձեռնարկելու ուղղությամբ, հորդորել են ընդլայնել ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի գրասենյակը:

Եռանախագահ երկրների այս և նախորդ հայտարարությունները ևս մեկ անգամ վերահաստատում են, թե որքան համահունչ են Հայաստանի և միջազգային հանրության մոտեցումները Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորման շուրջ, հիմնված՝ միջազգային իրավունքի երեք հիմնարար

սկզբունքների, ինչպես նաև մեկ ամբողջություն հանդիսացող այն տարրերի վրա, որոնք առաջարկվել են համանախագահ երկրների ղեկավարների հինգ հայտնի հայտարարություններում:

Այդ հայտարարությունները նաև ակնառու ցույց են տալիս, թե իրականությունից որքան հեռու են բանակցային գործընթացի շուրջ Բաքվի կատարած մեկնաբանությունները:

Մինսկի խմբի համանախագահ երկրների գործունեությանը և հիմնահարցի կարգավորման երեք սկզբունքներին սատարող հայտարարություն է ընդունվել Նոյեմբերի 30-ին Մինսկում կայացած ՀԱՊԿ ՀԱԽ նստաշրջանին:

Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի մեջ ամրագրվել է Մինսկի խմբի համանախագահներին և որպես հիմնախնդրի կարգավորման հիմք նրանց կողմից առաջարկված միջազգային իրավունքի երեք սկզբունքներին աջակցության մասին դրույթը:

2017թ. Յուլիսի 5-ին Եվրոպական խորհրդարանի լիազուգուր նիստի շրջանակներում ընդունվել է ՄԱԿ-ի ԳԱ 72-րդ նստաշրջանի կապակցությամբ Եվրոպական խորհրդարանի կողմից ԵՄ խորհրդին տրվող առաջարկությունների մասին բանաձևը, որում, մասնավորապես, առաջարկվում է շարունակել աջակցել և նոր լիցք հաղորդել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ և կայուն կարգավորմանը, ինչպես նաև մարդու իրավունքների և տարածքային ամբողջականության, ուժի չկիրառման և ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հարգմանն ուղղված դիվանագիտական ջանքերը:

Նոյեմբերի 15-ին Եվրոպական խորհրդարանի լիազուգուր նիստի կողմից ընդունվել է ԵՄ խորհրդին, Եվրոպական հանձնաժողովին և Եվրոպական արտաքին գործողության ծառայությանն ուղղված՝ Արևելյան գործընկերության Բոյուսելում կայանալիք զագաթաժողովին ընդամաք առաջարկությունների վերաբերյալ բանաձև, որում, ի թիվս այլ կետերի, վերահաստատվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանն ուղղված ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին և նրանց կողմից 2009թ. Առաջարկված հիմնարար սկզբունքներին, որոնք ներառում են տարածքային ամբողջականությունը, ինքնորոշման իրավունքը և ուժի չկիրառումը:

[2017թ. դեկտեմբերի 19-20-ին երևանում կայացել է ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության կոմիտեի հերթական՝ 17-րդ նիստը, որի եզրափակիչ](#)

հայտարարության մեջ նույնպես վերահաստատվում է աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին և նրանց կողմից առաջ քաշված հիմնարար սկզբունքներին:

Մարտի 28-ին ԱՄՆ Միչիգան նահանգի Սենատն ընդունել է բանաձև, որով ողջունել է Լեռնային Ղարաբաղի անկախությունը և կոչ արել դաշնային իշխանություններին ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Չնայած Ադրբեջանի իշխանությունների ջանքերին՝ Արցախ այցելող արտերկրի օրենսդիր մարմինների անդամների, հասարակական-քաղաքական գործիչների, լրագրողների, բլոգերների և զբոսաշրջիկների թիվն աճել է:

3. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾԱՆԱԶՈՒՄ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ

2017թ. հայկական դիվանագիտության առաջնահերթությունների շարքում շարունակում էր մնալ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը, ինչպես նաև Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը նոր ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային հանրության ջանքերում:

ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների կազմակերպմամբ և մասնակցությամբ բազմաթիվ երկրներում անցկացվել են Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ:

Ապրիլի 25-ին Չեխիայի խորհրդարանի Պատգամավորների պալատն ընդունել է Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձև:

2017թ. Հայոց ցեղասպանությունը ճանաչած ԱՄՆ նահանգների թիվը հասել է 48-ի. Հայոց ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած նահանգներին են միացել Վայոմինգը (ապրիլի 21), Թեխասը (մայիսի 19), Այովան (օգոստոսի 24), Ինդիանան (սոյեմբերի 6):

Հաշվետու տարում Հայոց ցեղասպանությունը ճանաչել և դատապարտել են նաև մի շարք երկրների տեղական ինքնակառավարման մարմիններ:

4. ՌՌԻՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

ՌԴ հետ դիվանագիտական հարաբերությունների 25-ամյակի, ինչպես նաև Բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին պայմանագրի 20-ամյակի հորեյանական տարում շարունակվել են համատեղ ջանքերը՝ ուղղված բոլոր ուղղություններով հայ-ռուսական դաշնակցային համագործակցության հետագա ամրապնդմանը: 2017թ. նշանավորվել է քաղաքական ակտիվ երկխոսությամբ, միջազգային հարթակներում քայլերի արդյունավետ համակարգմամբ, տարածաշրջանում խաղաղության և անվտանգության ապահովմանը, տնտեսական, էներգետիկ՝ ներառյալ ատոմային էներգիայի, տրանսպորտի, արտակարգ իրավիճակների, ապակենտրոնացված, գյուղատնտեսության, հումանիտար և այլ ոլորտներում համագործակցությամբ ու համատեղ նախագծերի իրականացմանն ուղղված միասնական քայլերով: Առավել ինտենսիվ են դարձել միջխորհրդարանական, միջգերատեսչական և միջտարածաշրջանային կապերը:

2017թ. ընթացքում երկկողմ և բազմակողմ ձևաչափերով ՀՀ և ՌԴ նախագահների միջև կայացել է շուրջ մեկ տասնյակ հանդիպում: Մարտ, օգոստոս և նոյեմբեր ամիսներին պաշտոնական և աշխատանքային այցերով ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն այցելել է ՌԴ: Այդ այցերի արդյունքներով ռազմավարական նշանակության պայմանավորվածություններ են ձեռք բերվել քաղաքական, ռազմատեխնիկական, առևտրատնտեսական, էներգետիկ և այլ ոլորտներում: Նոյեմբերի 15-ին ՀՀ և ՌԴ նախագահների ներկայությամբ՝ Տրետյակովյան պատկերասրահում Մարտիրոս Սարյանի նկարների ցուցահանդեսով մեկնարկել են Հայաստանի մշակույթի օրերը, միջոցառումներ են կայացել Ռուսաստանի մի շարք քաղաքներում:

Ճարունակվել են զարգանալ միջխորհրդարանական հարաբերությունները: Մարտին պաշտոնական այցով Երևան է այցելել ՌԴ Պետական դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինը: Հուլիսին ՀՀ ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը պաշտոնական այցով մեկնել է ՌԴ, որի ընթացքում հանդիպումներ է ունեցել ՌԴ Դաշնային Ժողովի երկու պալատների նախագահների՝ Վալենտինա Մատվիենկոյի և Վյաչեսլավ Վոլոդինի հետ:

Հայաստանի և Ռուսաստանի խորհրդարանների ղեկավարներն առանձին հանդիպումներ են ունեցել նաև միջազգային խորհրդարանական վեհաժողովների շրջանակներում: Ակտիվորեն աշխատանքները շարունակել է միջխորհրդարանական հանձնաժողովը. նիստեր են անցկացվել Խանտի-Մանսիյսկում և Երևանում:

Ակտիվ են եղել շփումները կառավարությունների ղեկավարների մակարդակով: Յունվար և հոկտեմբեր ամիսներին տեղի են ունեցել Հայաստանի և Ռուսաստանի կառավարությունների ղեկավարների փոխադարձ պաշտոնական այցելություններ: ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը և ՌԴ կառավարության ղեկավար Դմիտրի Մեդվեդևը հանդիպել են նաև Բիշքեկում, Աստանայում և Կազանում՝ Եվրասիական միջկառավարական խորհրդի և ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերին:

Տարվա ընթացքում ՀՀ և ՌԴ արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների միջև կայացել են տասնյակ հանդիպումներ երկկողմ և բազմակողմ ձևաչափերով: ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի՝ Ռուսաստան և ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցերի շրջանակներում, համապատասխանաբար, փետրվարի 21-ին՝ Մոսկվայում և նոյեմբերի 21-ին՝ Երևանում բացվել են Հայաստանի և Ռուսաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակին նվիրված հատուկ ցուցահանդեսներ:

Արտաքին գործերի նախարարությունների միջև անցկացվել է 10 խորհրդակցություն, որոնք ընդգրկել են երկկողմ, տարածաշրջանային և միջազգային հարթակներում փոխգործակցությանն առնչվող հարցերի մեծ շրջանակ:

Քայլեր են ձեռնարկվել երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության զարգացման ուղղությամբ: Յունվարի 11-ին ուժի մեջ է մտել 2015թ. դեկտեմբերի 23-ին ստորագրված «ՀՀ և ՌԴ միջև հավաքական անվտանգության կովկասյան տարածաշրջանում հակաօդային պաշտպանության միավորված տարածաշրջանային համակարգ ստեղծելու մասին» համաձայնագիրը:

Շարունակաբար զարգացել է նաև միջտարածաշրջանային համագործակցությունը: Յուլիտեմբերի 6-ին Երևանում կայացել է Հայ-ռուսական միջտարածաշրջանային 6-րդ համաժողովը:

Բազմաթիվ փոխայցելություններ են տեղի ունեցել տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակով:

Տարվա ընթացքում ստորագրվել է շուրջ երկու տասնյակ միջկառավարական, միջգերատեսչական և միջտարածաշրջանային իրավական փաստաթուղթ:

Փետրվարի 23-ից գործում է ՌԴ քաղաքացիների՝ Հայաստան ներքին անձնագրերով մուտք գործելու կարգը:

5. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐ

Հայ-ամերիկյան բարեկամական գործընկերության զարգացումը կարևոր տեղ է զբաղեցրել Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում:

Ճարունակվել է քաղաքական երկխոսությունը: ՀՀ և ԱՄՆ միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի շրջանակներում տեղի են ունեցել մի շարք միջոցառումներ:

[Մարտի 3-ին կայացել է ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հեռախոսազրույցը](#) ԱՄՆ պետքարտուղար Ռեքս Թիլերսոնի հետ: Չրույցի ընթացքում անդրադարձ է կատարվել երկկողմ օրակարգի բազմաթիվ հարցերի, առևտրատնտեսական փոխգործակցության ընդլայնմանը, մտքեր են փոխանակվել տարածաշրջանային և միջազգային մի շարք հրատապ խնդիրների շուրջ:

2017թ. սեպտեմբերին Հայաստան է այցելել ԱՄՆ Կոնգրեսի պատվիրակությունը, որի կազմում էին ինչպես Հանրապետական, այնպես էլ Դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախմբի համանախագահներ Ֆրենք Փալոունը և Ջեքի Սփիլըրը, կոնգրեսականներ Աննա Էշուն, Թուլսի Գեբրդը, Ջիմ Սենսենբերենը, Դեյվիդ Վալադեոն: [Պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել ՀՀ Նախագահի, ԱԺ նախագահի, վարչապետի և բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ:](#)

[Հուլիսի 21-ին](#) ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել է ԱՄՆ առևտրի հանձնակատարի տեղակալ Դեն Մուլանիին, [սեպտեմբերի 12-ին](#)՝ առևտրային քաղաքականության և տնտեսագիտության հարցերով առևտրի հանձնակատարի տեղակալ Էդ Գրեստերին:

[Սեպտեմբերի 20-ին](#) Էդվարդ Նալբանդյանը Նյու Յորքում հանդիպել է ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպական հարցերով տեղակալ Էլիզաբեթ Միլարդին, Ազգային անվտանգության խորհրդի Եվրոպական հարցերով ավագ տնօրեն Ֆիոնա Հիլին և պետքարտուղարի փոխտեղակալ Բրիջիթ Բրինքին:

[Հոկտեմբերի 4-ից 9-ը](#) Հայաստան է այցելել [ԱՄՆ Կալիֆորնիայի Սենատի և Ասամբլեայի պատվիրակությունը](#), որը հանդիպումներ է ունեցել ՀՀ բարձրաստիճան ղեկավարության հետ:

2017թ. հայ-ամերիկյան համագործակցությունն ակտիվ է եղել նաև երկկողմ տնտեսական ոլորտում: Մասնավորապես, տարին նշանավորվել է «Ճնող» ՅԷԿ-ի կառուցմանը մասնակցելու նպատակով ամերիկյան Նոր ընկերության մուտքով ՀՀ Էներգետիկայի ոլորտ:

ՀՀ ԱԳՆ և ԱՄՆ դեսպանության կողմից արտգործնախարարությունում կազմակերպվել էր Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև դիվանագիտական [հարաբերությունների հաստատման 25-ամյակին նվիրված լուսանկարների ցուցահանդեսը](#):

6. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

2017թ. Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգի հիմնական ուղղություններից է հանդիսացել Եվրոպական միության հետ հարաբերությունների և փոխգործակցության ընդլայնումը:

Փետրվարի 27-ից 28-ը Նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցելություն է կատարել Բրյուսել: Հանդիպումներ են տեղի ունեցել [ԵՄ Խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի](#), [Եվրոպական հանձնաժողովի նախագահ ժան-Կլոդ Յունկերի](#), [Եվրոպական Խորհրդարանի նախագահ Անտոնիո Տայանիի](#) և [ԵՄ Բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի](#) հետ: Այցի ընթացքում նախագահներ Սարգսյանն ու Տուսկն ազդարարել են շրջանակային Նոր համաձայնագրի բանակցությունների ավարտը:

[Նոյեմբերի 24-ին](#) ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը Բրյուսելում մասնակցել է Արևելյան գործընկերության 5-րդ գագաթաժողովին, որի ավարտին ՀՀ ԱԳ նախարար [Էդվարդ Նալբանդյանը](#) և [Եվրամիության արտաքին քաղաքականության և անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիին ստորագրել են](#) ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը:

Տարվա ընթացքում Հայաստանն ու ԵՄ բանակցել ու ընդունել են նաև «Գործընկերության առաջնայնություններ» փաստաթուղթը, որը փոխարինելու է Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում մինչև 2015թ. իրականացվող ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագիրը: Նոր շրջանակային համաձայնագրի հետ միասին Գործընկերության առաջնայնությունները դառնալու են երկկողմ համագործակցության հիմնական ուղենիշերը:

2017թ. ձեռքբերումներից էր նաև [ՀՀ-ԵՄ Ընդհանուր ավիացիոն գոտու համաձայնագրի նախաստորագրումը](#), «Ստեղծագործ Եվրոպա» ծրագրի «Մշակույթ» ենթածրագրին միանալու բանակցությունների եզրափակումը, ինչպես նաև [Տրանսեվրոպական տրանսպորտային ցանցի \(TEN-T\)](#) դեպի Հայաստանի Հանրապետություն ընդլայնման բարձր մակարդի փոխըմբռնման արձանագրության ստորագրումը:

[Ապրիլի 12-ին](#) Վարչապետը տեղի է ունեցել Վիշեգրադյան քառյակի (Լեհաստան, Չեխիա, Սլովակիա, Հունգարիա) և Արևելյան գործընկերության արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների հանդիպումը, որին մասնակցել է արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը:

[Մայիսի 23-ին](#) ԱԳ նախարար Նալբանդյանի գլխավորած պատվիրակությունը Բրյուսելում մասնակցել է Հայաստան - Եվրամիություն Համագործակցության խորհրդի 17-րդ նիստին:

[Հունիսի 19-ին](#) Լյուքսեմբուրգում կայացել է Եվրոպական միության և Արևելյան գործընկերության մասնակից երկրների ԱԳ նախարարների հանդիպումը, որին մասնակցել է նախարար Էդվարդ Նալբանդյանը:

[Հուլիսի 10-ին](#) Քիշնևում Էդվարդ Նալբանդյանը մասնակցել է Արևելյան գործընկերության երկրների ԱԳ նախարարների ոչ պաշտոնական 9-րդ հանդիպմանը:

[Սեպտեմբերի 8-ին](#) Տալլինում Էդվարդ Նալբանդյանը մասնակցել և ելույթով է հանդես եկել Եվրոպական միության և Արևելյան գործընկերության մասնակից երկրների արտգործնախարարների հանդիպմանը:

[Փետրվարի 3-ին](#) Երևան են այցելել Եվրոպական հանձնաժողովի Հարևանության հարցերով Գլխավոր տնօրեն Քրիստիան Դանիելսոնը, հոկտեմբերի 3-ին՝ ԵՄ հանձնակատար Յոհաննես Հանը, իսկ հոկտեմբերի 4-ից 5-ը Երևանում էր ԵՄ խորհրդի Քաղաքական և անվտանգության կոմիտեի պատվիրակությունը:

Տարվա ընթացքում Հարավային Կովկասի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչ, դեսպան Հերբերտ Չալբերը երկու անգամ այցելել է Հայաստան: Նոյեմբերին ԵՄ խորհրդի կողմից նշանակվել է նոր ներկայացուցիչ՝ Տոյվո Կլաարը: Վերջինս [դեկտեմբերի 1-ին](#) իր առաջին այցելությունն է կատարել Հայաստան, որի ընթացքում նրան ընդունել են ՀՀ Նախագահը և ԱԳ նախարարը:

[2017թ. դեկտեմբերի 19-20-ին](#) Երևանում կայացել է ԵՄ-Հայաստան խորհրդարանական համագործակցության կոմիտեի հերթական՝ 17-րդ նիստը, որի ընթացքում քննարկվել

են Հայաստան-ԵՄ հարաբերությունների հեռանկարները նոր՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրումից հետո, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության և համագործակցության, Լեռնային Ղարաբաղի հակամարտության և մի շարք այլ հարցեր: Քննարկումների արդյունքում ընդունվել է Համատեղ եզրափակիչ հայտարարություն եւ առաջարկությունների փաստաթղթեր:

7. ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐ

2017թ. շարունակվել է ուշադրության կենտրոնում մնալ հարևան երկրների հետ հարաբերությունների առավել ընդլայնումը:

7.1. ՎՐԱՍՏԱՆ

Տարվա ընթացքում բնականոն զարգացում են ապրել հայ-վրացական բարիդրացիական փոխհարաբերությունները:

Ակտիվ բնույթ են կրել փոխայցելությունները և բարձր մակարդակի շփումները: [Դեկտեմբերի 25-ից 26-ը](#) կայացել է ՀՀ Նախագահի պաշտոնական այցը Վրաստան: Հոկտեմբերի 2-ին՝ ՀՀ Նախագահի և Վրաստանի առաջին փոխվարչապետի ներկայությամբ Բավրայում բացվել է սահմանային նոր անցակետ:

Փետրվարի 23-24-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի պաշտոնական այցը Վրաստան:

Փոխայցելություններ են կատարել Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն և ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը:

Ապրիլ և սեպտեմբեր ամիսներին կայացել են Վրաստանի փոխվարչապետ, արտգործնախարար Միխեիլ Ջանելիձեի պաշտոնական և աշխատանքային այցելությունները Հայաստան: Երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարները հանդիպումներ են անցկացրել նաև Թբիլիսիում՝ ՀՀ Նախագահի այցի շրջանակներում, Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանի և Վիեննայում՝ ԵԱՀԿ արտգործնախարարների խորհրդի 24-րդ նիստի շրջանակներում:

Տարվա ընթացքում պարբերական բնույթ են կրել երկու երկրների տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակով փոխայցելությունները և հանդիպումները:

Վրաստան են այցելել ՀՀ գյուղատնտեսության, առողջապահության, տնտեսական զարգացման և ներդրումների, արտակարգ իրավիճակների, արդարադատության, տրանսպորտի նախարարները և զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահը: Հայաստան են այցելել Վրաստանի փոխվարչապետ և կրթության ու գիտության նախարարը, տնտեսության և կայուն զարգացման, մշակույթի և հուշարձանների պահպանության, ինչպես նաև գյուղատնտեսության նախարարները:

Պահպանվել է զարգացման դինամիկան առևտրատնտեսական համագործակցության ոլորտում, խորացել է համագործակցությունը, տրանսպորտի, էներգետիկայի, զբոսաշրջության, գյուղատնտեսության և այլ ուղղություններով:

Հունիսի 25-ից 26-ը երևանում կայացել է հայ-վրացական գործարար համաժողով:

Հայ-վրացական օրակարագի մաս են կազմել վիրահայ համայնքի հուզող խնդիրները, հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման հարցերը:

7.2. ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2017թ. շարունակել է ընդլայնվել հայ-իրանական ակտիվ գործակցությունը քաղաքական էներգետիկայի, առևտրատնտեսական, ֆինանսական, արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտակրթական, մշակութային, իրավապահ և բազմաթիվ այլ ոլորտներում: Տարին հագեցած էր բարձրաստիճան փոխայցելություններով, երկու երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև կայացած մի շարք խորհրդակցություններով:

[Օգոստոսի 5-ից 6-ը](#) թեհրան է այցելել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը՝ ԻԻՀ Նախագահ Հասան Ռոհանիի երդմնակալության արարողությանը մասնակցելու նպատակով: Տեղի է ունեցել Հայաստանի և Իրանի Նախագահների հանդիպումը:

Հոկտեմբերի 9-ից 10-ը տեղի է ունեցել ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի գլխավորած պատվիրակության պաշտոնական այցը թեհրան: ՀՀ վարչապետը հանդիպումներ է ունեցել ԻԻՀ Նախագահ Հասան Ռոհանիի, ԻԻՀ Մեջլիսի նախագահ Ալի Լարիջանիի և ԻԻՀ Նախագահի առաջին տեղակալ Էսհադ Ջահանգիրիի հետ:

[Նոյեմբերի 28-ին](#) երևան է այցելել ԻԻՀ արտաքին գործերի նախարար Մոհամադ Ջավադ Չարիֆի գլխավորած պատվիրակությունը: Այցի ընթացքում ԻԻՀ արտաքին

քաղաքական գերատեսչության ղեկավարին ընդունել են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը և վարչապետ Կարեն Կարապետյանը, կայացել են երկու երկրների արտգործնախարարների բանակցությունները:

Կայացել են տարբեր գերատեսչությունների ղեկավարների փոխայցույթություններ:

7.3. ԹՈՒՐՔԻԱ

Թուրքիայի ապակառուցողական դիրքորոշման պատճառով հայ-թուրքական հարաբերություններում որևէ դրական տեղաշարժ չի գրանցվել:

Միջազգային հանրությունը շարունակել է աջակցությունը հայ-թուրքական հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորման Հայաստանի սկզբունքային դիրքորոշմանը:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը 2017թ. սեպտեմբերին [ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանում իր ելույթում](#) նշել է, որ ՀՀ-ը Հայոց ցեղասպանության ճանաչումը երբեք նախապայման չի դարձրել Հայաստանի և Թուրքիայի երկկողմ հարաբերությունները կարգավորելու համար, և Թուրքիայի կառավարությունն անհեթեթ նախապայմաններ է առաջ քաշում Ցյուրիխյան արձանագրությունները վավերացնելու համար: Նույն ելույթում ՀՀ Նախագահը հայտարարել է, որ արձանագրությունների վավերացման գործընթացում Թուրքիայի կողմից դրական տեղաշարժի բացակայության պայմաններում ՀՀ-ն այդ երկու արձանագրությունները հայտարարելու է առ ոչինչ և 2018թ. գարուն է մտնելու առանց այդ արձանագրությունների:

[ՀՀ արտգործնախարարությունը հայտարարությամբ](#) է հանդես եկել հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ:

8. ԱՊՅ ԵՐԿՐՆԵՐ

Քայլեր են ձեռնարկվել **Բելառուսի Հանրապետության** հետ համագործակցության հետագա զարգացման ուղղությամբ:

Հայաստան է այցելել Բելառուսի վարչապետը:

Մայիսին և հոկտեմբերին ԱՊՅ և ԵԱՏՄ նիստերի շրջանակներում ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը երկկողմ հանդիպումներ է ունեցել իր բելառուս գործընկերոջ՝ Անդրեյ Կոբյակովի հետ:

Փոխայցելություններ են տեղի ունեցել տարբեր գերատեսչությունների ղեկավարների մակարդակով:

Հայ-մոլդովական հարաբերություններում 2017թ. առանձնացել է, մասնավորապես՝ Քիշնևում ՀՀ դեսպանության գործունեության մեկնարկով:

[Նոյեմբերի 9-ից 10-ը](#) Մոլդովայի նախագահ Իգոր Դոդոնը միջպետական հարաբերությունների պատմության ընթացքում առաջին անգամ այց է կատարել Հայաստան: ՀՀ և ՄՀ նախագահները հանդիպել են նաև ապրիլին Ղրղզստանում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում:

Սեպտեմբերին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանին ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է Մոլդովայի փոխվարչապետ, արտաքին գործերի և եվրոպական ինտեգրման նախարար Անդրեյ Գալբուրի հետ:

Չարգացել են **հայ-ղազախական** հարաբերությունները: Հունիսի 9-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է «Աստանա Էքսպո-2017» միջազգային ցուցահանդեսի բացման պաշտոնական արարողությանը:

Ղազախստանի վարչապետը աշխատանքային այց է կատարել Հայաստան:

Չարգացում են ապրել **Հայաստան-Թուրքմենստան** հարաբերությունները: Օգոստոսի 23-24-ին կայացել է Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուլհամեդովի պաշտոնական այցը Հայաստան, որի արդյունքներով ընդունվել է երկու երկրների նախագահների [Համատեղ հայտարարությունը](#) ստորագրվել է [9 համաձայնագիր](#):

[Սեպտեմբերի 17-ին](#) Ասիական 5-րդ խաղերի բացման արարողությանը ներկա գտնվելու նպատակով Թուրքմենստան է այցելել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը և հանդիպել Թուրքմենստանի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուլհամեդովի հետ:

Մարտի 27-29-ին պաշտոնական այցով Թուրքմենստան է այցելել ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանը, որի ընթացքում հանդիպումներ է ունեցել երկրի նախագահ Գուրբանգուլի Բերդիմուլհամեդովի հետ:

Դեկտեմբերին վերաբացվել է «Թուրքմենական ավիաուղիներ»-ի Աշխաբադ-Երևան-Աշխաբադ կանոնավոր չվերթը:

Ղրղզստանի վարչապետը աշխատանքային այց է կատարել Չայաստան: Միջազգային համաժողովների շրջանակներում կայացել են Չայաստանի և **Ղրղզստանի** արտգործնախարարների հանդիպումները:

Չայ-տաջիկական հարաբերությունների զարգացման համար նշանակալի էր հունիսի 14-ից 15-ը Տաջիկստանի Նախագահ Էմոմալի Ռահմոնի երկօրյա պաշտոնական այցը Չայաստան: Բարձր մակարդակի բանակցությունների արդյունքներով ընդունվել է Նախագահների համատեղ հայտարարություն, ինչպես նաև ստորագրվել է երկկողմ 9 համաձայնագիր:

Քայլեր են ձեռնարկվել **հայ-ուզբեկական** հարաբերությունների աշխուժացման ուղղությամբ: Ապրիլի 7-ին աշխատանքային այցով Տաշքենդում գտնվող արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպում է ունեցել Ուզբեկստանի Չանրապետության ԱԳ նախարար Աբդուլազիզ Կամիլովի հետ:

9. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

Քայլեր են ձեռնարկվել եվրոպական երկրների հետ համագործակցությունը սերտացնելու ուղղությամբ: Կայացել են մի շարք հանդիպումներ եվրոպացի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, այդ թվում՝ միջազգային կառույցների շրջանակներում:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այց է կատարել **Ֆրանսիայի Հանրապետություն** (մարտի 7-9) և աշխատանքային այցեր՝ **Բելգիայի Թագավորություն**: ՄԱԿ-ի ԳԱ 72-րդ նստաշրջանի շրջանակներում Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում է ունեցել **Լեհաստանի** Նախագահ Անջեյ Դուդայի հետ (սեպտեմբերի 19):

ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը պաշտոնական և աշխատանքային այցեր է կատարել **Ավստրիա** (հունվար, հուլիս և դեկտեմբեր), **Գերմանիա** (փետրվար), **Լեհաստան** (ապրիլ), **Կիպրոս** (մայիս), **Բելգիա** (մայիս, հոկտեմբեր), **Իտալիա** (հունիս, հոկտեմբեր), **Լյուքսեմբուրգ** (հունիս), **Սուրբ Աթոռ** (հունիս), **Սերբիա** (հունիս), **Էստոնիա** (սեպտեմբեր), **Հունաստան** (դեկտեմբեր) և **Ֆրանսիա** (հունվար, նոյեմբեր, դեկտեմբեր):

Միջազգային համաժողովների շրջանակներում կայացել են ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հանդիպումները Ավստրիայի, Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Լյուքսեմբուրգի, Բուլղարիայի, Իռլանդիայի, Մալթայի, Իսպանիայի, Միացյալ Թագավորության, Կոսովոյի արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների հետ:

Հայաստան են այցելել Նիդերլանդների և Չեխիայի Սենատի նախագահները, Լեհաստանի ԱԳ նախարարը, Հունաստանի ԱԳ նախարարը, Բոսնիա և Հերցեգովինայի ԱԳ նախարարը, Էստոնիայի ԱԳ նախարարը, ինչպես նաև ՄԹ Եվրոպայի և Ամերիկայի հարցերով պետնախարարը, Ֆինլանդիայի ԱԳՆ պետքարտուղարը:

Հոկտեմբերի 18-20-ը տեղի է ունեցել ՀՀ ԱԺ Նախագահ Արա Բաբլոյանի պաշտոնական այցը Լեհաստան:

2017թ. ընթացքում Լեհաստանում լայնորեն նշվել է հայ համայնքի կազմավորման 650 ամյակը, որին նվիրված շուրջ 120 միջոցառումներ են անցկացվել երկրի 37 քաղաքներում: Մարտի 29-ին, հայ համայնքի կազմավորման 650-ամյակի կապակցությամբ, Լեհաստանի հայ համայնքի ներկայացուցիչների պատվին

Լեհաստանի Նախագահ Անջեյ Դուդան Նախագահական պալատում կազմակերպել էր հատուկ ընդունելություն:

Յուլի 19-ին Լեհաստանի Սենատի կողմից միաձայն ընդունվել է հատուկ բանաձև՝ ի գնահատանք Լեհաստանի պատմության մեջ և մշակույթում ունեցած հայ համայնքի ներդրման: [Նոյեմբերի 24-ին](#) Լեհաստանի Հանրապետության Սեյմն ընդունել է միաձայն բանաձև Լեհաստանի հայ համայնքի հիմնադրման 650-ամյա տարեդարձի առիթով:

Կայացել են հայ-իտալական, հայ-լիտվական և հայ-չեխական միջկառավարական հանձնաժողովների նիստերը: Տեղի է ունեցել նաև հայ-չեխական ու հայ-իտալական գործարար համաժողովներ:

[Դեկտեմբերի 9-ին](#) Վիեննայում արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն անցկացրել է եվրոպական երկրներում և եվրոպայում տեղակայված միջազգային կազմակերպություններում հավատարմագրված Հայաստանի դեսպանների և մշտական ներկայացուցիչների ամենամյա խորհրդակցությունը, որի ժամանակ ամփոփվել են տարվա ընթացքում կատարված աշխատանքները, նախանշվել են հաջորդ տարի իրականացվելիք քայլերը:

10. ԱՍԻԱ-ԽԱՂԱՂՕՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ, ԱՖՐԻԿԱ

2017թ. Հայաստանը հետևողական քայլեր է ձեռնարկել ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի պետությունների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Չինաստանի հետ ակտիվ են եղել քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում միջգերատեսչական փոխայցելություններն ու հանդիպումները:

Նոյեմբերի 19-ից 20-ը կայացել է ՉԺՀ Անվտանգության և ահաբեկչության դեմ պայքարի հարցերով պետական հանձնակատար Չեն Գուպինի գլխավորած պատվիրակության այցը Հայաստան:

[Օգոստոսի 8-ին](#) Երևանում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և Չինաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև: Նույն օրն ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի և Չինաստանի ԱԳ նախարարի օգնական Լի Հուիլայի ներկայությամբ տեղի է ունեցել Երևանում Չինաստանի ժողովրդական Հանրապետության դեսպանության նոր շենքի հիմնարկեքի արարողությունը:

Մայիսի 14-ից 15-ը Պեկինում կայացած «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» միջազգային համագործակցության համաժողովին մասնակցել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Սուրեն Կարայանը:

Մայիսի 12-ին ՀՀ կառավարության և ՉԺՀ կառավարության միջև ստորագրվել է տեխնիկա-տնտեսական համագործակցության մասին համաձայնագիր, որով Հայաստանին կտրամադրվի 100 մլն ՉԺՀ յուանի անհատույց օժանդակություն՝ 200 շտապ օգնության ավտոմեքենա ձեռքբերման համար:

Հնդկաստանի հետ հարաբերությունները նշանավորվել են բարձրաստիճան փոխայցելություններով:

Հնդկաստանի Հանրապետության վարչապետ Նարենդրա Մոդիի հրավերով նոյեմբերի 2-ից 4-ը Նախագահ Սերժ Սարգսյանը աշխատանքային այց է կատարել Հնդկաստան: Տեղի է ունեցել Հայաստանի Նախագահի և Հնդկաստանի վարչապետի հանդիպումը: Այցի շրջանակներում ՀՀ Նախագահը հանդիպումներ է ունեցել Հնդկաստանի Հանրապետության նախագահի, խորհրդարանի վերին պալատի նախագահի, ինչպես նաև հնդկահայ համայնքի ներկայացուցիչների հետ:

[Ապրիլի 24-26-ը](#) պաշտոնական այցով Հայաստան է ժամանել Հնդկաստանի փոխնախագահ Մոհամմադ Համիդ Անսարիի գլխավորած պատվիրակությունը:

Սեպտեմբերի 28-ին Երևանում կայացել է հայ-հնդկական գործարար համաժողով:

[Փետրվարի 3-ին](#) Տոկիոյում տեղի են ունեցել Հայաստանի և **Ճապոնիայի** արտաքին քաղաքական գերատեսչությունների միջև հերթական քաղաքական խորհրդակցությունները:

[Մարտի 30-ին](#) ՀՀ ԱԳՆ-ում տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության և Ճապոնիայի կառավարության միջև Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվային ձայնագրությունները թվայնացնելու վերաբերյալ

համաձայնագրի ստորագրումը: Սեպտեմբերի 7-ին ստորագրել է Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի փրկարարական ստորաբաժանումների տեխնիկական համալրման վերաբերյալ դրամաշնորհների տրամադրման վերաբերյալ փաստաթուղթը:

[Հունիսի 29-ին](#) Երևան է այցելել ճապոնիայի արտաքին գործերի խորհրդարանական փոխնախարար Մոտոմե Տակիսավան, ում ընդունել է ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը:

[Հունիսի 13-ից 15-ը](#) Հայաստան է այցելել ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) նախագահ Շինիչի Կիտանոկայի գլխավորած պատվիրակությունը:

[Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 3-ը](#) Հայաստան է այցելել **Ինդոնեզիայի** ներկայացուցիչների պալատի փոխխոսնակ Ֆադլի Չոնի ղեկավարած պատվիրակությունը:

[Սեպտեմբերի 7-ին](#) Երևանում կայացել են արտգործնախարարությունների միջև հայ-ինդոնեզական քաղաքական խորհրդակցություններ:

Մարտի 15-ից 17-ը Հանոյում տեղի է ունեցել **հայ-վիետնամական** տնտեսական, գիտական և տեխնիկական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովի 1-ին նիստը:

[Սեպտեմբերի 20-ին](#) Նյու Յորքում ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է **Մադագասկարի** արտգործնախարար Էրի Ռաբարի-Նձակայի հետ:

[Սեպտեմբերի 21-ին](#) Նյու Յորքում տեղի է ունեցել ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի և **Սենթ Քիթս և Նևիսի** արտգործնախարար Մարկ Բրենթլիի հանդիպումը:

[Սեպտեմբերի 21-ին](#) ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանի շրջանակներում ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Նյու Յորքում հանդիպել է **Պալաուի** արտգործնախարար Ֆաուստինա Ռեհուհեր-Մարուզին:

[Սեպտեմբերի 21-ին](#) Նյու Յորքում կայացել է ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի և **Միկրոնեզիայի** արտաքին գործերի քարտուղար Լորին Ռոբերտի հանդիպումը:

[Սեպտեմբերի 21-ին](#) տեղի է ունեցել ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի և **Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության** արտգործնախարար Շարլ-Արմել Դուբանիի հանդիպումը Նյու Յորքում:

[Սեպտեմբերի 22-ին](#) Նյու Յորքում ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է **Լիբերիայի** արտգործնախարար Մարջոն Կամարային:

[Սեպտեմբերի 22-ին](#) ԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանի աշխատանքներին մասնակցող ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Նյու Յորքում հանդիպել է **Նաուրուի** նախագահ, արտաքին գործերի և առևտրի նախարար Բարոն Կաքային:

11. ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ

Գործնական քայլեր են ձեռնարկվել Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի երկրների հետ համագործակցության զարգացման ուղղությամբ:

Տարածաշրջանի երկրների հետ ստորագրվել է ավելի քան մեկ տասնյակ փաստաթուղթ:

Մերձավոր Արևելքի ազգային և կրոնական փոքրամասնությունների իրավունքները, նրանց ինքնության պաշտպանությանը վերաբերող հարցերը մշտապես գտնվել են Հայաստանի ուշադրության կենտրոնում:

Ճարունակվել են զարգանալ **հայ-լիբանանյան** հարաբերությունները տարբեր ոլորտներում: Ապրիլին կայացել է Լիբանանի պլանավորման հարցերով պետական նախարար Միշել Ֆարաունի այցը Հայաստան:

Մայիսին Կահիրեում տեղի է ունեցել **հայ-եգիպտական** Տեղեկատվական տեխնոլոգիաների ֆորումը:

Հունիսին մեկնարկել են կանոնավոր չվերթները Շարմ Էլ Շեյխից և Հուրգադայից դեպի Երևան:

Սեպտեմբերի 29-ին Երևանում գումարվել է հայ-եգիպտական միջկառավարական հանձնաժողովի 5-րդ նիստը, որի շրջանակներում տեղի է ունեցել հայ-եգիպտական համատեղ գործարար համաժողովը: Ստորագրվել է յոթ փաստաթուղթ:

Հայաստանը շարունակել է մարդասիրական օգնության տրամադրումը **Սիրիայի** ժողովրդին: ՀՀ Նախագահի հանձնարարությամբ փետրվարի 14-ին և 17-ին, հունիսի 7-ին և 8-ին շուրջ 80 տոննա մարդասիրական օգնություն է առաքվել Սիրիա:

Հալեպում շարունակել է գործել միակ օտարերկրյա ներկայացուցչությունը՝ ՀՀ գլխավոր հյուպատոսությունը:

Հունիսին մեկնարկել է Դամասկոս-Երևան-Դամասկոս կանոնավոր չվերթը:

Օգոստոսին Հայաստանը մասնակցել է Դամասկոսի միջազգային տնտեսական 59-րդ ցուցահանդեսին:

[Մարտի 21-ից 22-ը](#) Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այց է կատարել **Արաբական Միացյալ Էմիրություններ**՝ մասնակցելու Աբու Դաբիում անցկացվող «Հայաստան-Արաբական Միացյալ Էմիրություններ» ներդրումային համաժողովին: Նախագահն Աբու Դաբիում հանդիպում է ունեցել ԱՄԷ փոխնախագահ, վարչապետ, պաշտպանության նախարար, Դուբայի կառավարիչ Շեյխ Մոհամմեդ բին Ռաշիդ Ալ Մաքթումի հետ:

[Հուլիսի 18-ին](#) Հայաստան պաշտոնական այց է կատարել ԱՄԷ արտաքին գործերի և միջազգային համագործակցության նախարար Շեյխ Աբդալլահ բին Չայեդ Ալ Նահյանը, ով հանդիպել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի և ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Դուբայ քաղաքում հիմնվել է ՀՀ գլխավոր հյուպատոսություն:

[2017թ. մայիսի 14-ից 16-ը](#) կայացել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնական այցը **Կատար**, որի ընթացքում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ:

Հունիսի 18-ին Կատար աշխատանքային այց է կատարել Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը և հանդիպել Կատարի ԱԳ նախարար Շեյխ Մոհամմեդ բեն Աբդուլմահման Ալ-Թանիին: Նախարարները հանդիպել են նաև փետրվարին՝ Մյունխենի անվտանգության համաժողովի շրջանակներում:

Տեղի են ունեցել Հայաստանի և **Իրաքի** միջև տարբեր մակարդակների մի շարք փոխայցելություններ:

[Փետրվարի 17-ին](#) արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը Մյունխենում հանդիպել է **Իրաքյան Քրդստանի** նախագահ Մասուդ Բարզանիին:

Սեպտեմբերի 25-ին՝ Նյու Յորքում ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է Իրաքի ԱԳ նախարար Իբրահիմ ալ-Ջաաֆարիին:

Սեպտեմբերի 25-26-ը Երևանում տեղի է ունեցել հայ-իրաքյան միջկառավարական հանձնաժողովի չորրորդ նիստը: Նիստի ավարտին ստորագրվել է երկկողմ հարաբերությունների զարգացման վերաբերյալ արձանագրություն:

Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 4-ը Երևան է այցելել Իրաքի խորհրդարանի պատվիրակությունը:

[Նոյեմբերի 5-ից 7-ը](#) Մասկատում տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ Հայաստանի և **Օմանի** արտաքին գործերի նախարարությունների միջև:

Քայլեր են ձեռնարկվել **Իսրայելի** հետ երկկողմ հարաբերությունների խորացման ուղղությամբ, որոնք նշանավորվել են բարձր մակարդակի փոխայցելություններով:

Մարտին Երուսաղեմ է այցելել ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը՝ Սուրբ Հարություն տաճարում Հիսուս Քրիստոսի Սուրբ Գերեզմանի վերանորոգման հանդիսավոր արարողությանը մասնակցելու նպատակով:

Նոյեմբերին Իսրայելի վարչապետ, ԱԳ նախարար Բենյամին Նեթանյահուի հրավերով կայացել է ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի պաշտոնական այցը Իսրայել, որի շրջանակներում տեղի են ունեցել հանդիպումներ վարչապետ Բենյամին Նեթանյահուի, Կնեսետի խոսնակ Յուլի Էդելշտայնի, տարածքային համագործակցության նախարար Ցախի Հանեգբիի և մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Հուլիսին կայացել է Իսրայելի Պետության տարածքային համագործակցության նախարար Ցախի Հանեգբիի պաշտոնական այցը Հայաստան: Այցի շրջանակներում ստորագրվել է երեք փաստաթուղթ՝ դիվանագիտական անձնագրեր ունեցող անձանց մուտքի արտոնագրի պահանջի վերացման, կրկնակի հարկումից խուսափելու, մշակույթի, գիտակրթական, սպորտի և երիտասարդության ոլորտներում համագործակցության մասին:

Ակտիվ շփումներ են իրականացվել խորհրդարանական ձևաչափով:

2017թ. հունվարին Իսրայելում, իսկ սեպտեմբերին Երևանում տեղի են ունեցել հայ-իսրայելական հասարակական ֆորումի նիստերը:

12. ՀՅՈՒՄԱՆԻՏԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Հայաստանը շարունակել է աշխատանքներն ամերիկյան աշխարհամասի պետությունների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Օգոստոսի 29-ին Էդվարդ Նալբանդյանն ընդունել է **Կանադայի** խորհրդարանական պատվիրակությանը: Սեպտեմբերի 19-ին Նյու Յորքում տեղի է ունեցել Հայաստանի և Կանադայի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանի և Քրիստիա Ֆրիլանդի [հանդիպումը](#):

Փետրվարի 17-ից 23-ը Հայաստան և Արցախ է այցելել **Բուլղարիայի** խորհրդարանական պատվիրակությունը և դիտորդական առաքելություն և իրականացրել Արցախի Սահմանադրական հանրաքվեի ընթացքում:

[Սեպտեմբերի 21-ին](#) Նյու Յորքում ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է Բահամների արտգործնախարար Դարրեն Հենֆիլդին:

[Հոկտեմբերի 22-30-ը](#) Հայաստան և Արցախ են այցելել Մեքսիկայի Պատգամավորների պալատի Մեքսիկա-Հայաստան բարեկամության խմբի պատվիրակության անդամները:

Նոյեմբերի 17-ին պաշտոնական այցով Հայաստան է ժամանել **Բրազիլիայի** արտաքին հարաբերությունների նախարար Ալոիզիո Նունյես Տեռեյրան, ում [ընդունել](#) է ՀՀ Նախագահը: Այցի շրջանակներում ստորագրվել է «ՀՀ և ԲՐՀ կառավարությունների միջև առևտրային և ներդրումային համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը:

2017թ. Հայաստանն ու **Կոլումբիան** իրենց մայրաքաղաքներում փոխադարձաբար հավատարմագրել են ոչ-ռեզիդենտ դեսպաններ:

15. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԲԱԶՄԱԿՈՂՄ

15.1. ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Շարունակվել են ջանքերը ՀԱՊԿ շրջանակում համագործակցության հետագա խորացման և կատարելագործման ուղղությամբ:

[Ապրիլի 14-ին](#) ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Բիշքեկում կայացած ՀԱՊԿ անդամ-պետությունների ղեկավարների հանդիպմանը, որին որոշում է կայացվել մայիսի 2-ից ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պաշտոնում նշանակել ՀՀ ներկայացուցիչ Յուրի Խաչատուրովին:

[Նոյեմբերի 30-ին](#) Նախագահը մասնակցել է Մինսկում կայացած ՀԱՊԿ ՀԱԽ Նստաշրջանին, ուր ընդունվել է Հայաստանի նախաձեռնությամբ ներկայացված «ԼՂ հիմնախնդրի կարգավորման հարցում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների միջնորդական ջանքերին աջակցելու» վերաբերյալ հայտարարությունը, որում ՀԱՊԿ անդամ-երկրների նախագահները ևս մեկ անգամ վերահաստատել են իրենց աջակցությունը ՄԽ համանախագահողների գործունեությանը և հիմնահարցի կարգավորման հայտնի երեք սկզբունքներին: ՀԱՊԿ ՀԱԽ հավանությանն է արժանացել նաև նախորդ տարի հոկտեմբերին Երևանում կայացած Նստաշրջանի արդյունքներով ընդունված «Մինչ 2025թ. ՀԱՊԿ հավաքական անվտանգության ռազմավարության» իրագործման ծրագիրը:

[Յուլիսի 17-ին](#) ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Մինսկում մասնակցել է ՀԱՊԿ արտգործնախարարների խորհրդի նիստին:

[Սեպտեմբերի 21-ին](#) ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 72-րդ Նստաշրջանի շրջանակներում կայացած ՀԱՊԿ անդամ-պետությունների ԱԳ նախարարների հանդիպմանը մասնակցել է արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը:

ԵԱՅԿ արտագործնախարարների խորհրդի 24-րդ նիստի շրջանակներում՝ [ղեկտեմբերի 7-ին](#), ՀՀ ԱԳ նախարարը մասնակցել է ՀԱՊԿ անդամ-պետությունների ԱԳ նախարարների հանդիպմանը:

Հոկտեմբերի 7-ին և 13-ին Հայաստանում անցկացվել են ՀԱՊԿ անդամ-պետությունների զինված ուժերի հետախուզության ուժերի և միջոցների «Որոնում-2017» համատեղ մարտավարական-մասնագիտական և ՀԱՊԿ Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի համակազմերի ու ՀՀ ՉՈՒ և ՌԴ ՉՈՒ զորքերի միացյալ խմբավորման ստորաբաժանումների «Փոխգործակցություն-2017» համատեղ զորավարությունները:

15.2. ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունը շարունակել է իր ակտիվ ներգրավվածությունը Եվրասիական տնտեսական միության գործունեությանը:

[Ապրիլի 14-ին Բիշքեկում](#), մայիսի 31-ին Աստանայում, [հոկտեմբերի 11-ին Սոչիում](#) Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստերին:

ՀՀ վարչապետը մասնակցել է ԵԱՏՄ անդամ-պետությունների կառավարությունների ղեկավարների մակարդակով տեղի ունեցած երեք նիստերի՝ մարտի 7-ին Բիշքեկում, մայիսի 26-ին Կազանում, օգոստոսի 14-ին Աստանայում:

Հոկտեմբերի 6-ին Երևանում անցկացվել է Եվրասիական գործընկերության երկրորդ միջազգային համաժողովը, իսկ հոկտեմբերի 25-ին Հայաստանը հյուրընկալել է ԵԱՏՄ անդամ-պետությունների կառավարությունների ղեկավարների մակարդակով նիստը:

15.3. ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում Հայաստանն իր ակտիվ մասնակցությունն է ունեցել կառույցում ծավալվող գործընթացներին:

ՀՀ Նախագահը Սերժ Սարգսյանը [հոկտեմբերի 11-ին Սոչիում](#) մասնակցել է ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի նիստին, իսկ [ղեկտեմբերի 26-ին Մոսկվայում](#)՝ ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների ոչ պաշտոնական հանդիպմանը:

ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի մասնակցությամբ նոյեմբերի 3-ին՝ Տաշքենդում և մայիսի 26-ին՝ Կազանում կայացել են ԱՊՀ կառավարությունների ղեկավարների խորհրդի նիստերը:

ՀՀ փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանի գլխավորած պատվիրակությունը մասնակցել է ԱՊՀ տնտեսական խորհրդի չորս նիստի:

ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի մասնակցությամբ կայացել է ԱՊՀ ԱԳ Նախարարների խորհրդի երկու նիստ՝ [ապրիլի 7-ին](#) [Տաշքենդում](#) և [հոկտեմբերի 10-ին](#) [Սոչիում](#):

Հայաստանում անցկացվել են ԱՊՀ ճյուղային մարմինների մի շարք միջոցառումներ:

15.4. ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունը շարունակել է խորացնել իր ներգրավվածությունը Միավորված ազգերի կազմակերպության կառույցներում:

Հայաստան-ՄԱԿ հարաբերությունները նշանավորվել են կազմակերպությանը Հայաստանի անդամակցության 25-ամյակով, ինչի առիթով կայացել են մի շարք միջոցառումներ. [մարտի 16-ին](#) ԱԳ Նախարար Էդվարդ Նալբանդյանի և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի մասնակցությամբ Նյու Յորքում տեղի է ունեցել ՄԱԿ-ին Հայաստանի անդամակցության 25-ամյակի նվիրված հանդիսավոր միջոցառում: [Մարտի 17-ին](#) կայացել է Էդվարդ Նալբանդյանի և Անտոնիո Գուտերեշի հանդիպումը:

Սեպտեմբերի 19-ին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է Գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանին, որին հանդես է եկել ծրագրային ելույթով: ՀՀ Նախագահը Նյու Յորքում հանդիպել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

Սեպտեմբերին Հայաստանի պատվիրակության կազմում Նյու Յորք մեկնած ԱԳ Նախարար Նալբանդյանն ունեցել է 23 երկկողմ հանդիպում:

[Սեպտեմբերի 22-ին](#) արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը ՄԱԿ-ի կենտրոնակայանում՝ Հայաստանի Հանրապետության անունից ստորագրել է «Ասիայի

և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի անդրսահմանային ոչ փաստաթղթային (Էլեկտրոնային) առևտրի դյուրացման վերաբերյալ շրջանակային համաձայնագիրը»:

2017թ. Հայաստանը կրկին ներառվել է ՄԱԿ-ի պատվո ցանկում՝ կազմակերպության կանոնավոր բյուջեին ժամանակին և ամբողջությամբ կատարված անդամավճարների համար:

ՄԱԿ-ին Հայաստանի անդամակցության 25-րդ տարեդարձի շրջանակներում Երևանի պետական համալսարանում բացվել է ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Բուտրոս Դալիի անվան լսարան:

Ակտիվ աշխատանքներ են իրականացվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի շրջանակներում: [Նոյեմբերի 1-ին](#) ԱԳ նախարար Նալբանդյանը մասնակցել և ելույթ է ունեցել Փարիզում մեկնարկած ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր համաժողովի 39-րդ նստաշրջանին:

[Նոյեմբերի 9-ին](#) Փարիզում Հայաստանն ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մշակութային արժեքների՝ ծագման երկիր վերադարձը կամ ապօրինի յուրացման պարագայում դրանց ռեստիտուցիան խրախուսելու հարցերով միջկառավարական կոմիտեի անդամ:

Նոյեմբերի 27-ին Փարիզում կայացած ընտրություններին ՀՀ-ն ընտրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ձինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կոմիտեի անդամ:

Կոմիտասի և Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյաններն ընդգրկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Հռչակավոր մարդկանց և կարևոր իրադարձությունների հոբելյանների 2018-2019թթ. օրացույցում, իսկ «Քոչարի, ավանդական խմբապար» հայտն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում:

15.5. ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը շարունակել է ակտիվ ներգրավվածությունը Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության (ՖՄԿ) և գործընկեր կառույցների աշխատանքներում:

Մեկնարկել են 2018թ. Երևանում կայանալիք ՖՄԿ 17-րդ գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքները: Այդ նպատակով Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ ՀՀ վարչապետի գլխավորությամբ կազմավորվել է 2018թ. ՖՄԿ գագաթաժողովի նախապատրաստման և անցկացման միջգերատեսչական

հանձնաժողով: Նախապատրաստական աշխատանքների շրջանակներում հանդիպումներ են կայացել \$ՄԿ ղեկավարության, \$ՄԿ ղեկավարության հետ:

Մեկնարկել են 2018թ. երևանում կայանալիք \$ՄԿ 17-րդ գազաթափողովի նախապատրաստական աշխատանքները: Նոյեմբերին Փարիզում կայացած \$ՄԿ նախարարների 34-րդ համաժողովին ԱԳ նախարար [Էդվարդ Նալբանդյանը ստանձնել է \\$ՄԿ նախարարների համաժողովի նախագահությունը](#): Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը ելույթ է ունեցել նախարարական համաժողովին, որը միաձայն հավանության է արժանացրել \$ՄԿ երևանյան գազաթափողովի անցկացման օրերի, խորհրդանշանի և «Ապրել միասին» կարգախոսի, հիմնական թեմաների վերաբերյալ հայկական կողմի առաջարկներին:

[Մարտի 7-ին](#) Փարիզում ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը այցելել է \$ՄԿ կենտրոնակայան, հանդիպում ունեցել գլխավոր քարտուղար Միկայել Ժանի հետ:

[Հունվարի 25-ին](#), ինչպես նաև [դեկտեմբերի 20-ին Փարիզում](#) Էդվարդ Նալբանդյանը հանդիպումներ է ունեցել \$ՄԿ գլխավոր քարտուղար Միկայել Ժանի հետ:

Նոյեմբերի 25-ին \$ՄԿ և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի գործընկեր չորս պետությունների՝ Ալբանիայի, Հայաստանի, Ռումինիայի և Մոլդովայի միջև ստորագրվել է Գործընկերության Հուշագիր Ֆրանկոֆոնիայի ռազմավարության շրջանակներում կրթական համագործակցության մասին (2015-2022թթ.):

Մարտ-ապրիլ ամիսներին Հայաստանում Ֆրանկոֆոնիայի երկամսյակի կապակցությամբ կազմակերպվել է շուրջ 600 միջոցառում:

15.6. ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՈՒՆ

Հայաստանը շարունակել է ակտիվ մասնակցությունը ԵԱՀԿ գործունեության բոլոր երեք հարթություններում:

[Հունվարի 27-ին](#) ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Վիեննայում հանդիպել է ԵԱՀԿ գործող նախագահ Սեբաստիան Կուրցի, իսկ [հունվարի 27-ին](#) և [փետրվարի 16-ին](#)՝ ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Լամբերտո Չանիերի հետ: Վերջինիս հետ բանակցությունները շարունակվել են նաև [մայիսի 30-ին](#)՝ ԵԱՀԿ գլխավոր քարտուղարի Հայաստան այցի ընթացքում:

[Սեպտեմբերի 22-ին](#) [Նյու Յորքում](#) և [դեկտեմբերի 8-ին](#) Վիեննայում արտգործնախարարը հանդիպել է ԵԱՀԿ նորանշանակ գլխավոր քարտուղար Թոմաս Գրեմինգերին:

[Փետրվարի 23-ին](#) Էդվարդ Նալբանդյանն ընդունել է ԵԱՀԿ գործող նախագահի՝ Ջարավային Կովկասի հարցերով հատուկ ներկայացուցիչ, դեսպան Գյունտեր Բեխլերին:

[Յուլիսի 11-ին](#) Մաուերբախում ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել և ելույթ է ունեցել «Վստահության կառուցում երկխոսության և համագործակցության միջոցով» խորագիրը կրող ԵԱՀԿ մասնակից երկրների արտգործնախարարների ոչ պաշտոնական հանդիպմանը:

[Յուլիսի 24-ին](#) Պալերմոյում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել և ելույթ է ունեցել փախստականներին և միգրացիոն հոսքերին նվիրված ԵԱՀԿ Միջերկրածովյան խորհրդածողովին:

[Նոյեմբերի 20-ին](#) Էդվարդ Նալբանդյանը Երևանում ընդունել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի տնօրեն Ինգիբյորգ Գիսլադոտիրին:

[Նոյեմբերի 22-ին](#) Երևանում տեղի է ունեցել «Քրիստոնյաների և կրոնական այլ խմբերի անդամների հանդեպ ատելության շարժառիթով հանցագործությունների կանխարգելումը և դրանց հակազդումը. հեռանկարներ ԵԱՀԿ-ից և անդին» խորագրով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ համաժողովը:

[Դեկտեմբերի 7-ից 8-ը](#) ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը մասնակցել է Վիեննայում կայացած ԵԱՀԿ նախարարական խորհրդին, որի շրջանակներում հանդես է եկել [եյլույթով](#):

Լիակատար մեկուսացման մեջ հայտնված Ադրբեջանի՝ ԵԱՀԿ մասնակից բոլոր երկրներին դեմ գնալու հետևանքով կոնսենսուս չձևավորվեց ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի մանդատի երկարաձգման մասին որոշման շուրջ, որի պատճառով օգոստոսի 31-ին գրասենյակը դադարեցրեց իր գործունեությունը: ԵԱՀԿ քարտուղարության և մի շարք մասնակից երկրների հետ մեկնարկել են քննարկումները Հայաստանում ԵԱՀԿ ծրագրերի իրականացման շարունակման վերաբերյալ:

15.7. ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Հայաստանը շարունակել է ակտիվ մասնակցությունն ցուցաբերել Եվրոպայի խորհրդի կանոնադրական և մասնագիտացած մարմինների աշխատանքներին:

Մայիսի 19-ին Նիկոսիայում կայացած Եվրոպայի խորհրդի գործադիր մարմնի՝ Նախարարների կոմիտեի 127-րդ նստաշրջանին մասնակցել և [Ելույթով հանդես է եկել 33 ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը](#): Նիստի շրջանակներում Հայաստանը ստորագրել է «Մշակութային սեփականության դեմ հանցանքների վերաբերյալ» ԵՄ կոնվենցիան:

[Յուլյանմբերի 4-ին](#) տեղի է ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի աշխատանքային այցը Եվրոպայի խորհուրդ, որի ընթացքում վերջինս հանդիպում է ունեցել ԵՄ Գլխավոր քարտուղար Թորբյորն Յագլանդի հետ:

Նոյեմբերի 8-12-ին տեղի է ունեցել ԵՄ Տեղական և տարածքային իշխանությունների Կոնգրեսի նախագահ Գուդրուն Մուլեր-Թորնստրյոմի պաշտոնական այցը Հայաստան:

ԵՄԽՎ պատվիրակությունը՝ միջազգային դիտորդական առաքելության կազմում մասնակցել է 2017թ. ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների դիտարկմանը:

ԵՄ Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի պատվիրակությունը դիտարկել է 2017թ. մայիսի 14-ին կայացած Երևանի ավագանու ընտրությունները:

Հերթական փաստահավաք առաքելություններով Հայաստան են ժամանել ԵՄ քարտուղարության Քաղաքական տնօրինության պատվիրակությունը (հոկտեմբերի 24-26-ին) և Հայաստանի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման հարցով ԵՄԽՎ համազեկուցողները (նոյեմբերի 6-7-ին):

Մայիսի 23-ին Երևանում իրավասու բոլոր գերատեսչությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ 2015-2018թթ. Գործողությունների ծրագրի գնահատման միջկառավարական կոմիտեի նիստը:

Շարունակվել է ակտիվ համագործակցությունը ԵՄ Վենետիկի հանձնաժողովի հետ:

15.8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏԻՆՏՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ճարունակվել է Հայաստան-ՆԱՏՕ ակտիվ համագործակցությունը Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի (ԱԳԳԾ) շրջանակներում: [Ապրիլի 7-ին](#) Հյուսիսատլանտյան խորհրդի և Հայաստանի կողմից հաստատվել է Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ 2017-2019թթ. փաստաթուղթը:

[Փետրվարի 27-ին](#) Հյուսիսատլանտյան դաշինքի կենտրոնակայանում տեղի է ունեցել ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հանդիպումը ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յանս Ստոլտենբերգի հետ:

[Հունիսի 12-13-ը](#) տեղի է ունեցել Կովկասում և Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապատուրայի այցը Հայաստան:

[Դեկտեմբերի 18-ին](#), Հանրապետության Նախագահը երևանում ընդունել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Ռոուզ Գոթեմյոլլերին: Հանդիպում է կայացել արագործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:

Դեկտեմբերի 13-ից 18-ը անց է կացվել «Հայաստանում ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառումը:

ՀՀ ԱԳՆ-ն համապատասխան աշխատանքներ է կատարել «Չրահամեքենաների ոչնչացման, ականների վտանգի մասին իրազեկման և կրթական ծրագրերի իրականացման» նպատակով Հայաստանում ՆԱՏՕ-ի «Վստահության հիմնադրամի» հիմնման ուղղությամբ:

15.9. ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱ

[Փետրվարին](#)` Մյունխենի անվտանգության համաժողովի և [սեպտեմբերին](#)` ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում տեղի են ունեցել ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի և Արաբական Պետությունների Լիգայի գլխավոր քարտուղար Ահմեդ Աբուլ Դեյթի հանդիպումները:

16.

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտգործնախարարության գործունեության կարևորագույն ուղղություններից էր Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացումը:

Հայաստանը շարունակել է ակտիվ մասնակցություն բերել **Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության** (ՍՃՏՀԿ) շրջանակներում իրականացվող գործունեությանը:

[Դեկտեմբերի 15-ին](#) ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ստանձնել է **Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության նախագահությունը**՝ գալիք վեց ամիսների համար:

Մայիսի 21-ին Հայաստանը Ստամբուլում մասնակցել է ՍՃՏՀԿ ԱԳ նախարարների խորհրդի նիստին, իսկ [մայիսի 22-ին](#)՝ ՍՃՏՀԿ հիմնադրման 25-ամյակին նվիրված հոբելյանական գագաթաժողովին:

[Դեկտեմբերի 4-ին](#) արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել է ՍՃՏՀԿ կազմակերպության գլխավոր քարտուղար Մայքլ Քրիստիդիսին:

[Դեկտեմբերի 15-ին](#) ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Կիևում մասնակցել և ելույթ է ունեցել ՍՃՏՀԿ նախարարների խորհրդի նիստին:

2017թ. ընթացքում տեղի է ունեցել տնտեսական համագործակցության հարցերով միջկառավարական հանձնաժողովների 10 նիստ, երկկողմ և բազմակողմ ձևաչափերով ստորագրվել է տնտեսական ոլորտի 35 փաստաթուղթ:

Մարտի 22-ին Աբու Դաբիում անցկացվել է հայ-արաբական ներդրումային համաժողով: Հունիսի 7-ին Հռոմում կայացել է հայ-իտալական գործարար համաժողով: Դեկտեմբերի 12-15-ը Լիբանանում կազմակերպվել է գործարար համաժողով:

Հայաստանն անդամակցել է Ազատ տնտեսական գոտիների համաշխարհային կազմակերպությանը:

Փետրվարի 14-ից մեկնարկել է ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (**UNIDO**) «Հայաստանի արտահանման ուղղվածությունն ունեցող

ճյուղերի մրցունակության բարձրացումը արդիականացման և շուկան մատչելի դարձնելու միջոցով» ծրագրի երկրորդ փուլը:

[Մայիսի 17-19-ին](#), նոյեմբերի 21-24-ը Բանգկոկում ՀՀ պատվիրակությունը մասնակցել է **ՄԱԿ-ի Ասիական և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հանձնաժողովի** (ESCAP) ստեղծման 70-ամյակին նվիրված 73-րդ նստաշրջանի նախարարական հանդիպմանը և ESCAP-ի տարածաշրջանային տնտեսական համագործակցությանն ու ինտեգրացիային նվիրված նախարարական երկրորդ համաժողովին:

Հունիսի 15-ին Երևանում անց են կացվել «ԱՊՀ երկրների շրջանակներում տնտեսական համագործակցության զարգացման հարցերի շուրջ» խորհրդակցություններ:

Աշխատանքներ են տարվել **ՏՐԱՍԵԿԱ** ծրագրի շրջանակներում, որի Միջկառավարական հանձնաժողովի գլխավոր քարտուղար Միրջեա Չոպրագան մարտի 28-ին այցելել է Հայաստան:

Ճարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (**ՊԳԿ/FAO**) հետ, որի տնօրենի տեղակալ, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային բյուրոյի ղեկավար Վլադիմիր Ռախմանինի հետ հոկտեմբերի 18-ին Երևանում քննարկվել են Հայաստան-ՊԿԳ փոխգործակցության ընդլայնման հեռանկարները:

Նոյեմբերին Միջազգային Էներգետիկ խարտիան Երևանում անցկացրել է «Հայաստանի Էներգետիկ ոլորտի ներդրումային ռիսկերի նվազեցում» խորագրով բարձր մակարդակի կլոր սեղան:

Հայաստան են այցելել **Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի** նախագահ Սումա Չակրաբարտին (սեպտեմբերի 4), **Եվրոպական ներդրումային բանկի** փոխնախագահ Վազիլ Հուդակին (նոյեմբերի 30-դեկտեմբերի 1), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (**EBRD**) փոխնախագահ Ալան Պիյուի գլխավորած պատվիրակությունը (նոյեմբերի 30):

Մայիսի 16-ին «**Եվրասիական ֆոնդային բորսաների ֆեդերացիայի**» Թեիրանում կայացած գլխավոր ասամբլեայի նիստին որոշում է կայացվել ֆեդերացիայի գլխամասային գրասենյակը Հայաստան տեղափոխելու մասին: Ֆեդերացիայի գլխավոր քարտուղար է ընտրվել Հայկական «Նասդազ ՕԷմքս Արմենիա» ընկերության տնօրեն Կոնստանտին Սարոյանը:

Մեկնարկել է Արդյունահանող ճյուղերի թափանցիկության միջազգային Նախաձեռնությանը (ԱՃԹՆ) Հայաստանի անդամակցության գործընթացը:

Օգոստոսի 3-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ արտաքին քաղաքականության տնտեսական բաղադրիչի զարգացման նպատակով երկրների թիրախավորման տնտեսական չափանիշների և օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների տնտեսական գործունեության կատարողականի գնահատման չափանիշները հաստատելու մասին որոշումը: Իրականացվել են համապատասխան աշխատանքներ՝ նշյալ որոշումից բխող գործողությունների պլանավորման և իրականացման գործընթացը կազմակերպելու նպատակով:

ՀՀ և ՉԺՀ-ի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի, ԱՄԷ-ի, Հնդկաստանի, Չեխիայի, Իտալիայի միջև առևտրատնտեսական հարաբերությունների արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ Նախագահի մոտ խորհրդակցություններ են անցկացվել վերոհիշյալ երկրներում Հայաստանի դեսպանների մասնակցությամբ:

Նոյեմբերի 30-ին ՉԺՀ Չինտաո քաղաքում բացվել է ՀՀ առևտրական գրասենյակը:

ՀՀ ԱԳՆ-ն աջակցել է Հայաստանի զարգացման հիմնադրամի (ՀԶՀ) Նախաձեռնություններին և գործունեությանը, աշխատանքներ է տարել Հայաստանի զբոսաշրջության խթանման նպատակով, նպաստել է արտերկրում Հայաստանի ներդրումային հնարավորությունների և ծրագրերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

17. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Հայաստանը շարունակել է մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի ոլորտում սերտ համագործակցությունը միջազգային, տարածաշրջանային, ինչպես նաև երկկողմ մակարդակով:

ԱԳՆ-ը համադրել է մարդու իրավունքների ոլորտում պետական կառավարման մարմինների գործունեության համապատասխանեցումը ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին:

Արտաքին գործերի նախարարությունը համակարգել է 2017թ. ապրիլի 2-ին ՀՀ խորհրդարանական ընտրությունները դիտարկելու նպատակով Հայաստան ժամանած միջազգային դիտորդական առաքելությունների ընդունման և նրանց գործունեության պայմանների ապահովման ուղղությամբ աշխատանքները: Ընտրությունները դիտարկելու համար Հայաստան էին ժամանել շուրջ 650 միջազգային դիտորդ:

Մայիսի 24-ին ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը Մադրիդում մասնակցել է [եյուլթ](#) և ունեցել «Էթնիկ և կրոնական բռնության զոհերը Մերձավոր Արևելքում» խորագրով միջազգային նախարարական համաժողովին:

Մարտի 29-30-ը ժնկում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոմիտեի 17-րդ նստաշրջանին քննարկվել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների միջազգային կոնվենցիայի դրույթների կատարման վերաբերյալ Հայաստանի առաջին պարբերական զեկույցը:

Ապրիլի 27-28-ը ժնկում տեղի է ունեցել Ռասայական խտրականության դեմ պայքարի կոմիտեին Հայաստանի պարբերական 7-11-րդ զեկույցների քննարկումը, որին ՀՀ պատվիրակությունը ներկայացրել է Ռասայական խտրականության դեմ պայքարի կոնվենցիայի դրույթների իրագործմանն ուղղված քայլերը:

Հոկտեմբերի 2-ից 6-ը ԱԳ պատվիրակությունը ժնկում մասնակցել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով Բարձր հանձնակատարի ծրագրի Գործադիր կոմիտեի 68-րդ նստաշրջանին:

Դեկտեմբերի 1-2-ին Հայաստան է այցելել ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի Գործողությունների հարցերով տեղակալի գլխավորած պատվիրակությունը, որը հանդիպումներ է ունեցել Հայաստանում ապաստանած փախստականների տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ՝ գնահատելու համար վերջիններիս կարիքները և ուսումնասիրելու փախստականներին օժանդակելու ՀՀ դրական փորձը:

Մարտի 20-ին հրապարակվել է Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» զեկույցը:

Հունիսի 5-ին լույս է տեսել ԵԱՀԿ գործող Նախագահի՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով հատուկ ներկայացուցիչ և համակարգող Մադինա Ժարբուսինովայի 2016թ. Հայաստան այցի արդյունքում պատրաստված Հայաստանի վերաբերյալ զեկուլյոյը:

ԱՄՆ Պետքարտուղարության մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ տարեկան զեկուլյոյի համաձայն Հայաստանը հինգերորդ տարին անընդմեջ դասվել է 1-ին խմբում, ինչը նշանակում է, որ Հայաստանը համարվում է մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ առավել հաջող պայքար ծավալող երկրներից մեկը:

18. ԳՆՈՒԲԱԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՉ ԿՈՆՎԵՆՏԻՈՆԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Փետրվարի 16-ին հաստատվել է ՀՀ-ում կենսաբանական զենքի կոնվենցիայի դրույթների կիրառման ծրագրի միջոցառումների իրականացման 2017-2020թթ. ժամանակացույցը:

Հայաստանը հունիսի 1-ից 2-ը Տոկիոյում մասնակցել է ռուս-ամերիկյան Միջուկային ահաբեկչության դեմ պայքարի գլոբալ Նախաձեռնության (GICNT) լիազումար նիստին:

Սեպտեմբերի 21-ին Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) 61-րդ նստաշրջանում Հայաստանն առաջին անգամ ընտրվել է այդ կառույցի Գործադիր խորհրդի անդամ՝ 2017-2019թթ. ժամանակահատվածի համար:

Հոկտեմբերի 18-ին Հայաստանը վավերացրել է 1925թ. «Ռազմական գործողությունների ժամանակ հեղձուցիչ, թունավորող և այլ գազերի օգտագործման և մանրէաբանական պատերազմի միջոցների արգելման մասին» Ժնևյան արձանագրությունը:

ՀՀ ԱԳՆ իր իրավասությունների շրջանակներում աջակցել է տարերային ու տեխնաժին աղետների կանխարգելման, դրանց ռիսկի նվազեցման, արձագանքման ու արտակարգ իրավիճակներին պատրաստվածության ոլորտում համապատասխան միջազգային կազմակերպությունների և մի շարք պետությունների հետ

համագործակցության զարգացմանն ու ընդլայնմանը նպատակաուղղված ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության նախաձեռնություններին:

[Յուկոնմբերի 13-ին](#) ՀՀ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել է Ադետների ռիսկի նվազեցման ՄԱԿ-ի գրասենյակի եվրոպական տարածաշրջանի համակարգող Պաուլա Ալբրիտոյին:

19. ԽԱՂԱՂԱՊԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունն իր ակտիվ, հետևողական ներգրավվածությունն է բերել միջազգային խաղաղության և անվտանգության ուղղությամբ իրականացվող ջանքերին: Հայաստանը շարունակել է մասնակցությունն Աֆղանստանի (Վճռական աջակցություն), Կոսովոյի (KFOR), Լիբանանի (UNIFIL) և Մալիի (MINUSMA) խաղաղապահ առաքելություններում:

Շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունների դեպարտամենտի (DPKO) հետ:

20. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հանրապետության Նախագահի՝ ՀՀ միասնական արտաքին քաղաքականության վարման գործում պետական մարմինների գործունեությունը համակարգելու վերաբերյալ [հրամանագրի](#) դրույթների համաձայն՝ արտաքին գործերի նախարարությունը շարունակել է համակարգել Հայաստանի պետական կառավարման մարմինների արտաքին կապերը և նպաստել դրանց խորացմանը:

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունները սատարել են խորհրդարանական դիվանագիտության ուղղությամբ տարվող աշխատանքներին: ԱԳՆ համակողմանի աջակցություն է ցուցաբերել միջխորհրդարանական կապերի զարգացմանը, միջազգային կազմակերպությունների խորհրդարանական ձևաչափում փոխգործակցության սերտացմանը և ակտիվացմանը:

Լրացուցիչ ջանքեր են գործադրվել մի շարք երկրների հետ ապակենտրոնացված համագործակցության զարգացման, Հայաստանի մարզերի ու քաղաքների և տարբեր պետությունների վարչատարածքային միավորների միջև հարաբերությունների հաստատման, փոխգործակցության ընդլայնման և խորացման ուղղությամբ՝ դրանք դարձնելով երկկողմ հարաբերությունների օրակարգի բաղկացուցիչ մաս:

Արտաքին քաղաքական օրագարկում շարունակել է կարևոր տեղ զբաղեցնել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը և այդ ուղղությամբ ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնություններին աջակցությունը: ՀՀ արտաքին գործերի նախարարությունն ակտիվ մասնակցություն է բերել սեպտեմբերի 18-20 Երևանում կայացած Հայաստան-Սփյուռք վեցերորդ համահայկական համաժողովի նախապատրաստման, անցկացման և լուսաբանման աշխատանքներին: Համաժողովի «Արտաքին քաղաքականություն» նիստի շրջանակում քննարկումներ են ծավալվել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորման գործընթացին, Հայոց ցեղասպանության ճանաչմանը, ցեղասպանությունների կանխարգելման քաղաքական և իրավական գործընթացներին, արդի արտաքին մարտահրավերներին և դրանց արձագանքման գործում Հայաստան-Սփյուռք գործակցությանը, խորհրդարանական դիվանագիտությանն առնչվող հարցերի շուրջ:

Կարևոր տեղ է հատկացվել հայկական մշակույթի ներկայացման, արտերկրում գտնվող հայկական մշակութային ժառանգության պահպանման և տարբեր պետությունների հետ մշակութային համագործակցության հաստատման և զարգացման ուղղությամբ ՀՀ մշակույթի նախարարության հետ համատեղ աշխատանքներին: Կազմակերպվել են Հայաստանի մշակութային օրեր Ռուսաստանում, Գերմանիայում, Իտալիայում, Չինաստանում, Կորեայում, Լատվիայում, Լիտվայում, Ճապոնիայում, Լեհաստանում, Բելառուսում, Ռումինիայում և այլ երկրներում:

21. ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏ

Ընդլայնվել է Հայաստանի միջազգային իրավապայմանագրային դաշտը: Ստորագրվել է 73 միջազգային պայմանագիր, իրականացվել է 106 միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման գործընթաց:

Ուժի մեջ է մտել 64 միջազգային պայմանագիր:

ԱԳՆ համակարգում շրջանառվել է 142 936 փաստաթուղթ:

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Արտգործնախարարության մշտական ուշադրության կենտրոնում է եղել արտերկրում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ճգնաժամային իրավիճակներում հայտնված ՀՀ քաղաքացիներին և ազգությամբ հայերին օգնության ցուցաբերումը: ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչության և հյուպատոսական հիմնարկների կողմից սպասարկվել է շուրջ 151 000 քաղաքացի:

Տարվա ընթացքում փոփոխություններ են կատարվել գործող իրավական ակտերում, որոնցով կանոնակարգվել և ավելի են դյուրացվել քաղաքացիներին մատուցվող հյուպատոսական ծառայությունները:

ԱԳՆ շարունակել է հատուկ աջակցություն ցուցաբերել սիրիահայերին, լիբանանահայերին և իրաքահայությանը:

Շարունակվել է www.tundarc.am տեղեկատվական համակարգի՝ ՀՀ ԱԳՆ իրավասությանը վերաբերող բաժինների սպասարկումը: Վերագործարկվել է ՀՀ էլեկտրոնային վիզայի տրամադրման համակարգի www.evisa.mfa.am նոր՝ վերափոխված կայքէջը:

ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ Արաբական Միացյալ Էմիրությունների, Կատարի Պետության, Ճապոնիայի քաղաքացիների համար սահմանվել է Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու համար առանց արտոնագրի ռեժիմ, իսկ Հնդկաստանի քաղաքացիները ձեռք են բերել դյուրացված կարգով Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագիր ստանալու հնարավորություն՝ նաև ՀՀ սահմանային կետերում: Փետրվարի 23-ից ՌԴ քաղաքացիներին իրավունք է ընձեռվել ՀՀ տարածք մուտք գործել ՌԴ քաղաքացու ներքին անձնագրով:

23. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017թ. ՀՀ Նախագահը կատարել է 21 օտարերկրյա այց, որից 4-ը՝ պաշտոնական, 17-ը՝ աշխատանքային: Պաշտոնական այցով Հայաստան են այցելել 4 պետության ղեկավար: ՀՀ ԱԺ նախագահը կատարել է 8 արտասահմանյան այց: Հայաստան այցելել է 3 պետության խորհրդարանի ղեկավար: ՀՀ վարչապետը կատարել է 8 օտարերկրյա այցելություն, որից 4-ը՝ պաշտոնական, 4-ը՝ աշխատանքային: Հայաստան են այցելել 8 երկրի կառավարության ղեկավար, որոնցից 1-ը՝ պաշտոնական, 7-ը աշխատանքային այցելությամբ: ԱԳ նախարարը կատարել է 41 այցելություն: Հայաստան է այցելել 19 արտգործնախարար և միջազգային կազմակերպության ղեկավար: Արտաքին գործերի նախարարը 105 հանդիպում է ունեցել տարբեր երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարների հետ:

24. ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017թ. դիվանագիտական հարաբերություններ են հաստատվել Բահամների, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետության, Միկրոնեզիայի, Պալաուի, Սենթ Զիթս և Նևիսի, Լիբերիայի, Նաուրուի հետ:

Այդպիսով, 2017թ. դեկտեմբերի դրությամբ Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 175 պետության հետ: Հայաստանում հավատարմագրված է 110 դեսպան (ռեզիդենտ և համատեղության կարգով), 26 միջազգային կազմակերպության ներկայացուցիչ, 1 գլխավոր և 34 պատվավոր հյուպատոս:

2017թ. դեկտեմբերի դրությամբ արտերկրում Հայաստանն ունի հավատարմագրված 43 ռեզիդենտ դեսպան, ովքեր համատեղության կարգով հավատարմագրված են ընդհանուր առմամբ 73 երկրում: ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 22 միջազգային կազմակերպություններում: Արտերկրում գործում են ՀՀ 9 գլխավոր հյուպատոսություն, 1 հյուպատոսական կետ և 39 պատվավոր հյուպատոս:

25. ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

2017թ. ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցն ունեցել է 29 շրջանավարտ:

2016-17թթ. Դիվանագիտական դպրոցի ծրագրերում դասավանդել են 85 դասախոս՝ 24 պետություններից:

Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են ՀՀ Նախագահի, ԱԺ և կառավարության աշխատակազմերի, արտգործնախարարության, պետական կառավարման մամիհների շուրջ հիսուն աշխատակիցներ:

26. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔ

Տարվա ընթացքում շարունակվել են ՀՀ արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, մեր երկրի հեղինակության ամրապնդմանն ուղղված քայլերը:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը հարցազրույց է տվել «Եվրոնյուզ» հեռուստաընկերությանը, իսպանական «EFE» լրատվական գործակալությանը, «Միր» հեռուստաընկերությանը, իրանական «Շարդ» օրաթերթին, «ԻՌՆԱ» իրանական պետական լրատվական գործակալությանը, «Ռոսիյսկայա գազետա» պարբերականին, «ՌԻԱ Նովոստի» լրատվական գործակալությանը, «Ռոսիա 24» հեռուստաընկերությանը, «ԲՅՄ» բիզնես պորտալին, հնդկական «Դուրդարշան» հեռուստաընկերությանը, Ղրղզստանի հանրային հեռուստաընկերությանը, «France Press» գործակալությանը, «CCTV» չինական կենտրոնական հեռուստաընկերությանը: «Իզվեստիա» թերթում հրապարակվել է ՀՀ Նախագահի հոդվածը:

Հանրապետության վարչապետն ու ԱԳ նախարարը մի քանի տասնյակ հարցազրույցներ են տվել միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներին, մի շարք երկրներում հանդես են եկել մամուլի ասուլիսներով և դասախոսություններով՝ ներկայացնելով տարածաշրջանային և միջազգային տարբեր գործընթացների, խնդիրների և դրանց հանգուցալուծման վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումը, ինչպես նաև երկրում իրականացվող բարեփոխումները, տնտեսական, ներդրումային և զբոսաշրջային հնարավորությունները:

Արտգործնախարարը տվել է 33 ասուլիս և հարցազրույց, հանդես եկել 41 ելույթներով:

Հայաստանի և Արցախի վերաբերյալ հեղինակավոր միջազգային պարբերականներում հրապարակվել են հատուկ համարներ և բազմաթիվ հոդվածներ:

Տարվա ընթացքում ԱԳՆ-ն շարունակել է Հայաստանում կազմակերպված միջազգային համաժողովների, միջոցառումների, Հայաստանում ապրիլի 2-ին կայացած խորհրդարանական ընտրությունների՝ օտարերկրյա լրատվամիջոցների կողմից լուսաբանման աշխատանքների համակարգումը, տարբեր երկրներից բարձրաստիճան պատվիրակությունների այցերի տեղեկատվական ապահովման նպատակով արտասահմանյան լրատվամիջոցների հետ աշխատանքը:

Հայաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ հարցազրույցներ են տվել և ելույթներով են հանդես եկել նաև ԱԳ նախարարի տեղակալներն ու մամուլի խոսնակը:

Ակտիվ գործունեություն է իրականացվել Հայաստանի և Արցախի վերաբերյալ օտարերկրյա առաջատար լրատվամիջոցներում հատուկ ռեպորտաժների, վավերագրական ֆիլմերի և հոդվածաշարերի նախապատրաստման գործում, որոնցից առանձնահատուկ հիշատակման է արժանի ֆրանս-գերմանական «Arte» հեռուստաընկերության նկարահանող խմբի, «Սի-Էն-Էն»-ի հաղորդավար Էնթոնի Բուրդեյնի «Parts Unknown» հաղորդաշարի, «Սի-Էն-Էն - Գրիս»-ի նկարահանող խմբի, «Channel 4»-ի նկարահանող խմբի անդամների այցերի կազմակերպումը: Գործընկեր կառույցների հետ համագործակցաբար կազմակերպվել են մի շարք առաջատար լրատվամիջոցների ներկայացուցիչների այցերը Հայաստան և Արցախ:

Թվային դիվանագիտության միջազգային սանդղակում Աշխարհի 206 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 34-րդ տեղը:

ԱԳՆ կողմից հավատարմագրվել է օտարերկրյա 200-ից ավելի լրագրող, որոնց ցուցաբերվել է համակողմանի աջակցություն՝ միջոցառումների լուսաբանման, հանդիպումների և հարցազրույցների կազմակերպման, նկարահանումների իրականացման, Հայաստանի մասին տեղեկատվական, զբոսաշրջային նյութերի պատրաստման և այլ հարցերում: